

Մ. ՊԵՇԻԿՅԱՆ-ԱՃԼՅԱՆ

ՏԱՂԵՐ

ՆԱՅՈՒՆՅՐԱՏ

1947

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

10827

Октябрьский, Г.

40

763

Зак. 39

ՄԿՐՏԻԶ ՊԵՇԻԿՐԱՆՈՒՅԱՆ

83159
45

1947 թ. ԳՆՎԵՐԿԱՆ

Տ Ա Ղ Ե Ր

Տնրատ, առաջնաբան, ծանոթագրություններ
ևկ բնագրան ԱՐԱՄ ԽՆԺԻՅԱՆԻ

Ժողովրդական ՀՍՍՌ Գիտ. Ազգ. հսկահան անգամ
ԱՐՄՆ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ

10827

A
II
19228



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

Ե Ր Ե Վ Ա Ն 1947

Նկարիչ՝ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ

Մկրտիչ Քեփիկտաշլյան


ՔԵՏԻ

(Ու արմանսկոմ յազնե)

Արմգիզ· Երեւան 1947



ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՈՒՆԼՅԱՆ
(1828—1869)



եւ որքան էլ Պեշիկթաշլյանի սիրտ վշտի մեջ կենսազրական տարբեր
դեր խաղա (անսպասախան սեր), այնուամենայնիվ, դա Արտակի և Մեհեկի
սիրտ ողբերգութեան մի արտահայտութեանն է, որ, ինչպէս տեսանք, պայ-
մանավորված էր հայրենիքի քաղաքական վիճակով:

Արտակների և Մեհեկների սիրտ ողբերգութեանը բանաստեղծին բե-
րում է այն արամարանական եզրակացութեանը, թե՛ որպիսզի հաճույքն ու
սերը առանց սուգի լինեն, պետք է նախ և առաջ հայրենիքի վրայից թո-
թափել օտարի լուծը:

Մնասցես բարձրով, սեր իմ սեր,
Հրավեր մարտից որոտաց...
... Ի սուրբ հողս հայրենյայ
Բառնամ ըզլուծ օտարի:

Այսպիսով, ազգային-ազատագրական պայքարը այն առանցքն է, որի
շուրջը դառնում են Պեշիկթաշլյանի մտքերն ու մտորումները, հույզերն ու
երգանքները՝ նաև բնութեան և սիրտ երգերում:

Մկ. Պեշիկթաշլյանն արևմտահայ պոեզիան դուրս բերեց Մխիթարյան-
ների կլասիցիզմի անկյանը ու ստան ապարանքից և մտցրեց կյանք: Ճիշտ
է, այդ ուղղութեամբ Ալիշանը որոշ քայլեր արել էր, բայց հեղաշրջումը
կատարեց Պեշիկթաշլյանը: Ի տարբերութեան Մխիթարյան բանաստեղծ-
ների, նա պոեզիայի մեջ մտցրեց ոչ միայն իրական հայրենիքը, այլ և
իրական սերը: Նա բարեբար ազդեցութեան ունեցավ հեռագա սերունդների
այնպիսի խոշոր բանաստեղծների վրա, ինչպիսիք Պետրոս Դուրյանը և Հով-
անեսես Հովհաննիսյանն են: XIX դարի մեր նոր պոեզիայի շենքը քարձ-
րանում է այն հիմքի վրա, որի անկյունաքարերից մեկը դրված է Մկ.
Պեշիկթաշլյանի ձեռքով:

Թվով շատ չեն Պեշիկթաշլյանի բանաստեղծութունները, — ընդամենը
մի քանի տասնյակ, — բայց մեծ են իրենց տեսակարար կշռով: Մենք նկատի
ունենք նրա պոեզիայի թե՛ խոր գաղափարայնութունը, թե՛ բարձր ար-
վեստը:

Նա ձևի վարպետ է, բայց ձևապաշտ՝ չէ: Բանաստեղծութունը նա
հղկում է մեծ հոգածութեամբ, բայց ոչ թե՛ գաղափարական բովանդակու-
թեան հարվին, այլ՝ վերջինս ավելի ցայտուն, ավելի սլացիկ զարձնելու հա-
մար: Նրա բանաստեղծական տողը և բառը բնական ու օրգանական են,
ինչպես վարպետ կառուցողի սրբատաշ քարը շենքի ամբողջութեան մեջ,
նրա ոճի վտեմութունը ոչ թե՛ արտաբին պաճուճանքի, այլ պարզութեան
մեջ է:

Պեշիկթաշլյանը տեսողական և զգացողական նրբերանգների վարպետ
է: Նա չի շլացնում, այլ պայծառորեն լուսավորում է իրերն ու երևույթները,
հաճախ մի փոքրիկ մանրամասնով բացահայտում նրանց ներքին իմաստն ու
հատկանիշը:


Նրա տաղաշարիութիւնը բազմազան է ու կրաժշտական, ուստի նա
առատ նյութ է տալիս կոմպոզիտորներին: Դրա սլատնաւաներից մեկը, թերևս
նաև այն է, որ բանաստեղծն ինքը երաժշտագետի տվյալներ է ունեցել:

Պեշկեթաշլյանի պոեզիան անմիջական է ու վարակիչ, որովհետև նա
յուրաքանչյուր տաղում դրել է իր, խորապես ասլրած, միս ու արյուն շար-
ձած, միտքն ու զգացմունքը:

Նա մեր ժողովրդականացած պոետները է, որովհետև իր դարաշրջանի
առաջավոր գաղափարներն ու ազնվագույն երազանքներն է շարտանայտել
քայլերով արատազրական շարժման առաջընթացում:

Ա. ԻՆՃԻԿՅԱՆ

Տ Ա Ղ Ե Ր



1. ԵՂԲԱՅՐ ԵՄԲ ՄԵՔ

Ե Ր Գ

Ի բյուր ձայնից բնության շրթեց
Քե երգք թոչին սիրողարար,
Մատունք կուսին ամենագեղ
Քե որ դարնեն փափուկ քընար,
Չունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն

Տներ ինձ քու ձեռքդ, եղբայր հմք մեք,
Որ մըրըրկավ էինք զատված.
Բաղդին ամեն սի չարանենդ
Ի մի համբույր ցովին ի բաց.
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ ալևոր Մայրն Հայաստան
Տեսնե գորդիս յուր քովե քով,
Մըրտին խորունկ վերքըն դաժան
Քաղցր արտասվաց բուժին ցողով.
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Մեկտեղ լացինք մենք ի հընում...
Եկեք դարձյալ հար անբաժան
Խառնենք զարտոսր և ըզխնդում,



10827
A 29228

Որ բազմածնունդ ըլլա մեր ջան.
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

Մեկտեղ հոգնինք, մեկտեղ ցանենք:
Մեկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարյաց յերկիրն հանենք,
Որ կյանք առնուն Հայոց Կաշտեր.
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

2. ԳԱՐՈՒՆ

Ո՛հ ի՛նչ անուշ և ի՛նչպես գով
Առա՛վոտուց փըջես, հովիկ,
Ծաղկանց վըրա գո՛ւրգուրալով
Եվ մազերուն կուսին փափկիկ:
Բայց չես հովիկ իմ Հայրենյաց,
Գընան անցիր սըրտես ի բաց:

Ո՛հ ի՛նչ ազու և սըրտագին
Ծառոց մեջեն երգես, թռչնիկ:
Սիրո ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի քո ձայնիկ:
Բայց չես թռչնիկ իմ Հայրենյաց,
Գընան երգե սըրտես ի բաց:

Ո՛հ ի՛նչ մըմունջ հանես, վըտակ
Ականակիտ ու հանդարտիկ:
Քու հայելվույդ մեջ անասլակ
Նային զիրենք վարզն ու աղջիկ:
Բայց չես վըտակ իմ Հայրենյաց,
Գընան հոսե սըրտես ի բաց:

Թեպես թռչնիկն ու հովն Հայոց
Ավերակաց շրջին վերա,
Թեպես պղտոր վըտակն Հայոց
Նոճիներու մեջ կը սողա,
Նոքա հառնչք են Հայրենյաց,
Նոքա չերթան սըրտես ի բաց:

3. ԱՌ ԶԵՓՅՈՒՌՆ ԱԼԵՄՏԱՂԻԻ

Դու փափկաթե մանկիկ զեփյուն,
Ազրերց վրայեն լուսակարկաջ,
Անուշ հոտով ծագկանց ըսփյուն՝
Ի՞նչպես թըռչիս ինձ ընդառաջ,
Ու խուսնի և զով ընծայելով
Զիս սղջունես հեղիկ շնչով:

Ո՛հ, կը սիրեմ ըզքեզ, հոգմիկ,
Երբ դու փութաս ինձի գալու,
Ի պար ի թուիչ ի սուշ մեղմիկ,
Այրած ճակատիս իմ այցելու,
Ծաղիկ հոգվույս, քեզ զովացամ,
Բացվի ի լույս ախորժ կենաց:

Սլացիր, փափկիկ դու սուբհանդակ,
Լնբ տար հովտին ու ծործորին
Եվ անտառաց բարձրադիտակ,
Ուր երամով սոխակք թառին,
Թե մըտերիմն յուրյանց եկավ
Բյուր ըզմայմանց հիշատակով:

Ո՛հ, կսրսրվամ իմ հաճույքներ,
Հոս վերըստին զըտնեմ ըզձեզ.
Ծառոց շքով ևք ծածկբլեր
Ու փըրփըրով առվակին հեզ.
Ահա կայտոեք ի յայս ճըմակ,
Ի յայս թըփուտ հովանոցակ:

Հոս դառն հոգեր մեկիկ մեկիկ
Ճակտես ի բաց հեռանային
Ու փռենջք ժամուց գեղապարիկ
Սիրաքս թեթև օրորելին,
Եվ բնություն՝ մայր որդեսեր՝
Բնքուշ գրկաց մեջ գիս գրգվեր:

Հոս ճեմեին երեկոյան
Ի զով ըստվեր պար մի կուսից,
Մազերն հովուն բազմաբուրյան,
Սիրաք բնծայված հեշտ վայելից.
Շող լուսնակին, կույսն ու աղջիկ
Զիրար շոյեն սիրատարփիկ:

Մըտերմություն, Սեր կրակուրոց,
Ինչ անուշ եք յայտ տեսարան,
Ուր բյուր գալարք ձեզ հանգըստոց
Ու անհուն գաշտեր ըզբոսարան.
Մըտերմություն, ինձ երանի
Թե հոս ծոցիդ հոգիս թռանի:

Իսու փափկաթե մանկիկ զեփյնու.
Ազգերց վրային քաղցրակարկաջ,
Մնուշ հատով ծաղկանց ըսփյուն՝
Թըռիւր, թըռիւր ինձ ընդառաջ,
Ու խունկ և գով ընծայելով
Պարե՛ հորս գիս հեզիկ շնչով:

4. ԱԵՄՔ Ի ԼՅԱՌՆ ՀՍԿԱՅԻՆ

Ե Ր Գ

Ծովըն ցուայր ու ծրփծրփայր,
Սուբայր ահաան ի մեջ ալյաց,
Հոփն հեղաթռիչ երթայր ու գայր
Վազվրտանելով ամեն գիաց.
Բացեք, հաճույք, փափուկ թևեր,
Տարեք ըզմեզ բըլուրն ի վեր:

Մըրմընջեին մանըր ալյակը
Նավուն կողից տալով համբույք,
Եվ կույս բաժիշտ՝ Ոգվույս նմանյակ՝
Երգ ծավալեր ի ծով անդույք.
Բացեք, հաճույք, փափուկ թևեր,
Տարեք ըզմեզ բըլուրն ի վեր:

Ի՞նչ շուտ հասանք և հանդարտիկ...
Կարծես ծովուն վըհուկ գըթոտ
Մեզ գգվելով ի ծոցն հուշիկ
Բերավ ի գող յայս քտտորտ.
Բացեք, հաճույք, փափուկ թևեր,
Տարեք ըզմեզ բըլուրն ի վեր:

Զերգ գեղավարս հաղթող հակա
Որ խրոխա նայի ընդ չորս բուրբ,
Մյնպես լեռն ալ մեզի մոտ կա
Մնտառներով պըտակավոր.
Բացեք, հաճույք, փափուկ թևեր,
Տարեք ըզմեզ բըլուրն ի վեր:

Թուչնո՞ մը պես կուսիկն անուշ,
Տըված մազերն հովոնն ի ծուփ,
Կը թըռչըտի ընդ քար, ընդ փուշ,
Դարե ի դար, թուփե ի թուփ,
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Դար վեր, դար վեր. սէ, ի՛նչ վըտեմ
Ընդարձակի կապույտ եթեր.
Դար վեր, անա ծովունն նըտեմ
Դիտեմ հեովանց անեզ պատկեր.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Միտք իմ անժույժ և սուրբաբշավ
Թըռավ հանկարծ յուր ալյաց մեջ,
Խաղաց, ծըփաց, թավալեցավ
Թուխ կոհակաց ընդ ելևէջ.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Ու ձյունափայլ այն փրփուրներ
Որ անդընդին ցալանն մեջեն,
Կարծես ճերմակ վարդից թերթեր
Որ յուր ծոցեն կը բողբոջեն.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Հուր հեր արփվույն կը ծավալի
Ի դաշտ, յարօս գեղաժըպիտ,
Ծո՞ղն ի յերկիճնս կը զմայլի,
Երկինք ի ծով ծիծաղախիտ.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Ի՛նչ սըխրալի ես, դու, բնությո՞ւն,
Երբ կենսունակ քուկին շնչով
Պա պարավոր ազվոր գարուն

Գունակերպիկ ծաղիկներով,
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Ի՛նչ գեղանի ես դու, բնություն,
Երբ շաղն ու ցող ծոցեդ տեղան,
Եվ քու մեջքիդ գոտի անհուն
Յոթնակամար կապես ծիածան.
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Ու երբ գիշերըն կը բանա
Յուր աստղազարդ ամպհովանի,
Լուսնին զարդով ճակտին վերա
Նայի ծովուն ի հայելի.
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Ի՛նչ վեհ, ի՛նչ մեծ ես դու, բնություն,
Որտ նայվածքն է սուր փայլակ,
Իր ձայն՝ մըրըրկոտ ալյաց մոլորչյուն,
Երբ ամպերեն վազե կայծակ.
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Ու այս ամեն ըսքանչելիք
Ավելի վեհ կուգան ի տես
Ու վառեն զիմ սիրա և ոգիք,
Երբ ի բարձանց գիտեմ ըզքեզ,
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Ո՛հ, զայս բնություն երգե՛, կուսան՝
Յուր զարդերեն մեկն ալ դու չես.
Քենե չքնաղ կըլլամ գուսան,
Որ ձայնիկովդ երկինք դյուրեմ.
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր:

Ահա խոսի... լըցան բոցով
Յուր սեաթույր՝ ականողիք.
Ահա երգե... լըցավ խանդով
Հովիտ ու մարգ ու ամեն տեղիք.
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլոււրն ի վեր:

Շունչք և մրմունջք՝ դադարեցին.
Միայն հողմիկ փըչեր համբույր,
Ու ի վերա մաքուր ճակարհ
Օրորվեին հոպոպք սամույր.
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլոււրն ի վեր:

Ու լուսափայլ ամպիկ բարակ
Գլխուն վերև հեզիկ խաղայր,
Եվ հովանին զով 'ւ ախորժակ
Դեմքին վերա ծավալանայր.
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլոււրն ի վեր:

Անշուշտ ի յայն ծածկյալ էին
Ձույգ մի հրեշտակ օդապարիկ,
Որ իրարու փըսփըսային՝
«Ի՛նչ անուշ մեր հրգե քուրիկ...»
Բացե՛ք, հաճույք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլոււրն ի վեր:

5. ԱՇՈՒՆ

Ե Ր Գ

Ո՛ւր եք, ծաղկունք դուք փայլփրլունք,
Ո՛ւր ձեր այտեր անուշ հոտով,
Ո՛ւր ձեր պչրանք ու փափկություն,
Եվ ծոց լըցյալ շաղ մարգարտով:

Ինչո՞ւ հովիկ, անգժւթ հովիկ
Յուրա համբուցրնեք կուտա ձեզի,
Մոռցած արդյոք յուր սեր գողարիկ
Եվ յուր գզվանք փայտայելի:

Ո՛ւր թիթեռնիկ հոլաթեյան,
Ձեր բաժակին հյութոց կարոտ,
Որ գայր թերթից ձերոց դունյան
Տանեկ ըզբույր հեռու և մոտ:

Ա՛հ, ո՛ւր սոխակն իմ սիրակեզ
Որ տերեց հոտած ի շուք
Հալեր կարմրիկ վարդին ի տես
Եվ կողկողեր սրտամաշուք:

Ձրկան գեփյուտ, չրկան ծաղիկ,
Եվ ծաղկատարփ չրկա թիթեռ.
Ձրկան սոխակ, ո՛չ վարդենիք,
Լըցյալ ցողով մարգարտահեռ:

Սակայն կուսիկ մի կա փափուկ,
Բույր անձեն շնչե դարուն.
Կուսիկ, որ դեռ թրվի մանուկ,
Հրեշտակ ի թուխ վարս ոլորուն:

Այլ ի՞նչ պիտին ծաղկանց փունջեր
Յարժամ նորա այստերն հայիս.

Այլ ի՞նչ պիտին վարդից հոտեր
Յարժամ նորա մոտ գրտնըվիս:

Ո՛հ, մի երթար դու տեսնելու
Ճերմակ շուշանն. թե յիւր ճյուղիկ
Ինչպես նազի գլուխըն աղու,
Երբ հովն իրեն տա սղջունիկ:

Տես թե կուսին փափուկ ուլան
Վերա ինչպես կը տատանի
Հույլ հոսողյոսք գեղածածան
Չքնաղ գլխիկ յուր նագելի:

Հնու կաց, գիշերց սիրուն խոսնակ,
Լըսե՛ մեկ մ'ալ զյուր դայլայլիկ.
Հնու կաց, լուսին երբ ի դաշնակ
Երթևեկին մ'անու թաթիկը:

Ի՞՞՞՞ Ո՛վ հրաշագեղ կույս օրիորդ,
Յիմ հայրենիս թե դու էիր,
Հայոց շիրմաց արտասալահորդ
Ուռենիներն թե տեսներ,

Եղ յուր վըտակն՝ ողբանըվեր
Ի սըրբափայլ յուր հայելի
Տայր օրորել ա՛յն քու պատկեր
Որ հրեշտակաց է տարփելի,

Աննժամայակ աչերդ մեղույ՜
Նորա երկինք թե տեսներն,
Ու մեկ նայաց, նայաց մ'անույ՜
Արձրկեիր նորա հողին,

Յայնժամ սոխակ շիրմացն Հայոց,
Որ միշտ ողբա հողմոց ի մոռենչ,
Գեթ մի անգամ լըռյալ ըզկոծ
Քեզ սղջուներ յաւրախ մըրմունջ:

6. ԵՐԳ

ՅԱլեմտադրն այն գեղեցիկ
Գացի ժուռ գալ անհող մոլար,
Ուր բյուր վըտակ բյուրեղ ծոցիկ
Մատուցանեն տնկոց դալար:

Երբ փայլփլըուն ծագե արև,
Ոսկի ցանվի լերանց վերա,
Շող արծրկե ամեն տերև,
Զեփյուռ թփոց հեռ կը խաղա:

Բայց քան զամեն հովիկ քնքուշ
Հրեշտակ մի անդ կը թևածեր,
Ու քան զամեն երգերն անուշ
Այն նագերվույն ձայնիկն հնչեր:

Թըռթր ինձի, անա մըռայլ
Անտառին մեջ իջավ գիշեր.
Կանչե պըլպուլ լուսնին ի փայլ-
Բաց անոնցմե չունինք ընկեր:

Սա հովանիքն անուշաբույր
Տեսնեն ըզմեզ թև ընդ թևով
Ատրիս ծաղիկ, անդին համբույր
Փունջ փունջ սիրտ ընծայելով:

Պարանոցիս մարգրիտ մանյակ
Կախե սպիտակ քուկին թևեր,
Մազերդ գըլխիս իմ հովանյակ,
Ու լուռ մեջիկ սահին ժամեր:

Երբ բընություն անխոս կենա,
Մահկանացուք ձայն չեն հաներ:
Լուռ է ամեն ինչ որ շուրջ կա,
Ավելի տանք խոսին սրտեր:

Շուշանափայլ բարձ մի փափկիկ
Ըլլա քու ծոցդ ինձ առ ի քուն,
Բայց թե այն սերդ է խարուսիկ,
Լավ է չտեսնամ ըզլույս առտուն:

7. ԵՐԳ

Ո՞ւր էր, թե դեփյուռիկ
Ըլլայի թափառիկ,
Ոսկեթեւ մաղերուդ
Տայի համբուրիկ:

Ո՞ւր էր թե վարդ գոհար,
Ըլլայի վառ ի վառ,
Ընարեի ինձ բազմոց
Կուրծքըդ ձյունափայլ:

Ո՞ւր էր թե քանարիկ
Ըլլայի ես թռչնիկ,
Թըռչիլ գալ ու շոյել
Դեմքըդ գեղեցիկ:

Կամ երազ խուսափուկ,
Որ գայի մինակուկ
Քունիդ մեջ խըռովել
Քու սիրտըդ փափուկ:

Ի՞նչ ըրի ես քեզի,
Որ ցավոց այդպիսի
Եվ անբույժ հարվածոց
Ըլլամ արժանի:

Հրեշտակ էր թըռավ,
Երազ էր, որ անցավ,
Այդ քո սերըդ փափուկ
Շուտով թողմեցավ:

8. ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ

Մինչդեռ հուսով խայտա բնություն
Հեռ գառնաշունչ ձըմերայնվույն
Եվ ի գավառն իմ հայրենի
Գեղածիծաղ դառնա գարուն,
Մինչ բույր ի բույր փըթթին ծաղկունք,
Եվ ճըովողեն նորեկ ծիծուունք,
Ի քեղ եմ դարձ առնեմ յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան:

Ոչ Հելվեայան ինձ պաշտավայրք
Եվ կամ զըվարթ մարգագետինք,
Ոչ քան ըզքեկ չըքնաղազեկ
Իտալական պայծառ երկինք.
Հեռի ի քեն պանդուխտ գոլով,
Քոյովըզ հար տապիմ անձկով.
Ի խանձարուրդ իմոց կենաց,
Ո՛վ Հայաստան, առնեմ ես դարձ:

Գայցեն ավուրք, ուր մանկության
Անկցի ախոցս իմ գեղ դալար
Եվ յիկնէն խույս տացեն վայելք
Կենաց՝ թեթե ի գարշապար,
Ուր հեզ Մուսայս մատն ի յերեր
Մոռանայցե երգել ըզպեր.
Ըզնինջ ի ծոցդ առնում յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան:

9. ՀԱՅ ՔԱՉՈՐԴԻ

Ապառաժուտ լերան մը կող,
Հեցյալ ի քար գերեզմանի,
Աչք մերթ յերկինս և մերթ ի հող՝
Խարտիշագեղ կայր պատանի.
— Ո՛վ դու որդիդ լերանց հովտաց,
Ինչո՞ւ այգպես սիրտդ է ցաված:

Կուզե՞ս որ մեծ փոթորկյալ ծով
Մատուցանե քեզ մըխիթար՝
Կոհակաշարժ յուր լարերով
Երգյալ ի շունչ մըրըրկավար:
Ո՛վ դու որդիդ լերանց հովտաց,
Ինչո՞ւ այգպես սիրտդ է ցաված:

Կուզե՞ս որ քեզ անեղաշուք
Խընդար կամարն աստեղց անթիվ,
Ե՛վ բընություն պայծառ զարդուք
Փըպտի ծաղկամբ և զեփյուռիվ.
Ո՛վ դու որդիդ լերանց հովտաց
Ինչո՞ւ այգպես սիրտդ է ցաված:

Կամ փափկագուռն ալ ըսփոփանք
Միթե կուզե՞ս մոր քաղցվենի
Ու սիրունի՞ն անուշ գգվանք,
Որ քու կըսկիծըդ փարատի.
Դեռ ի՞նչ կուզես, սէ, մի ծածկեր...
— Կուզե՞մ վատող և գնդակներ:

10. ՄԱՀ ՔԱՋՈՐԴՎՈՒՅՆ

Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ,
Ե՛կ, մի զողար, մտակցիր հոս,
Անլաց աչոք դիտե՛ր զորդիդ
Ու յուր վերքերն արյունահոս.

Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Ձեյթուն:

Ինչպես երբեմն որբանիս մեջ
Կակուղ ձեռքով փայփայելով
Մանկիկ մարմնուշյա հանգիստ տայիր
Իբրև հրեշտակ նրվազելով.

Ձյա հանգչեցուր ի հող, և դուն
Ուրախ լուրեր տար ի Ձեյթուն:

«Նորեկ որդվուշյա կենացն արև
Ձեզի համար փայլի՛, հայե՛րք»,
Այսպես յայնժամ դու կ'երգեիր՝
Օրորոցիս նըստյալ քովեր.

Անոնց համար շիջավ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Ձեյթուն:

Կարմիր կալակք ցայտին վերքես,
Սակայն, մայր իմ, նայե՛ր չորս դին,
Չարյունըռուշտ թուրքերըն տես
Հազարներով փրոված գետին.

Կերավ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Ձեյթուն:

Մըռնչեցին ինչպես վիշապ
Ու մեր վըրա հարձակեցան.
Մ'վ Հայրենիք, ի հուր, ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան.

Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Ու ծափ զարկին մեր հարց սակերք
Ձի չէ՛ մեռած Հայոց կըրակ,
Ու ցընծացին այնչափ գոհեր
Ձի լուծավ վրեժ յարյան վըտակ.

Խնդաց Մասիս, մայր իմ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Վերջին համբույր տամ քեզ, մայրիկ,
Հատուցանես գայն սիրունվույս,
Վերջին անգամ դրկեմ մեր հող
Ուր արդ կիջնամ ի ծոցն անլույս:

Խաչ մը տընկե վըրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

11. ԹԱՂՈՒՄՆ ՔԱՉՈՐԴՎՈՒՅՆ

Ո՛չ փող զարկինք, ո՛չ արձագանք լեռնասույզ
Մարե ի սար չարաշըշուկ տարին լուր-
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտահույզ,
Երբ պատանվույն բացինք մըռայլ փոսին դուռ:

Գիշերական մուշ ըստվերներ շուրջ կային,
Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք:
Լուսին միայն դողող շողայր մեր գլխին,
Սուդ էր պատեր ըզդաշտ, բըյուր և երկինք:

Պետք չէր դագաղ, և ոչ ձերմակ պատանքներ,
Որով գոցվեր ազատորդի Զեյթունցին:
Նա հետ մարտին կարծես հոգնած կը հանդչեր,
Ու վերաբիւռն կարմիր բավեր յուր անձին:

Անձայն ու կարճ «Ննջեցելոց» մի զրուցեց
Մեր քաջ տերտերն, գինվոր հայոց Վ Աստուծո,
Գովեց ըզմահն և ըզքաջությունն յուր օրհնեց,
Թույլ չի արվալ հառաչ մ'ու ճիչ հանելո:

Բայց երբ գըլուխն ի բարձ դրինք հողաշեն,
Տեսանք ըզգեղ ճակտին ու վերքըն պայծառ,
«Ո՛վ պատանյակ, ըսինք ամենքս մեկ բերնեն,
Վասն հայրենյաց մեռար, դու շնտ ապրեցար:

«Գընս զրուցե՛ հայկազարմից մեծ ողվոց,
Որ կան այստեղ ազատ ու քաջ դեռ հայեր,
Որոնք ի բյուր պատերազմաց թեպեա խոց՝
Մեջ ամպրոպաց ի ժայռ կանդուռն են կեցեր»:

Մեյ մ'ալ քամի հանկարծ փրչեց ցըրտաշունչ,
Լուսնին շողերն եկալ գոցեց մըթին ամսը,
Ու մեր սարերն, դերթ ուրվականք անմըռունչ
Սև գլուխնին տնկած դիտեն աղշությամբ:

Յայնժամ ցուրտ ցուրտ հող լիցուցինք յուր վըրան,
Խաչ մը դըրինք, ինչպես յուր մոր պատվեր ետ,
Ո՛չ այլ շքեղ արձանագիր ոչ տապան,
Զինքըն մինակ թողուցինք յուր փառքին հետ:

12. ՀԱՅ ՔԱՉՈՒՇԻՆ

Այն ուր կերթա զըմբթագեմ
Եվ սուրալով լերանց վերան
Փափուկ թեթև ոտիցն ի ճեմ,
Ուսից վերս հերքըն ծըփան:

Արդյոք չքնաղ եկնով գարուն,
Կամ ավետիս ետ ծիծառնուկ,
Թե՛ ել հաղվե, պարե Զեյթուն,
Ելե՛ք ի դաշտ, ծեր, կհւյս, մանուկ:

Եվ նա խնդում և զարգարված
Ու նազելով աշխուժարար
Կերթա ընդ պարս ընկերուհյայ
Քաղել նարկիզ և նունուֆար:

Սահայն ոչ ոք կա իրեն քով,
Զայն մը լըսվի, բայց ծիծառն չէ,
Թեկիցը տակ չունի կողով,
Ուր ոք ծաղկի փունջեր շարե:

Իոթ մը փըչեց ինչպես մըրրիկ,
Ու Զեյթունի անտառներուն
Հաղթահասակ դողան մայրիք,
Ցցվեց սոյուժ բաշ գալարուն:

Այն բարձրաբերձ սարից պահպան
Աղատությունն՝ ել սըլացալ,
Հովտաց, դաշտաց, հյուղից վերան
Թեատարած հովանացալ:

«Արբիք ի դեն, թուրքն անարկու
Լողաց եղբարց արյան ի ծով,
Արդ ի մեր կույս վազըս կանոնու
Արյունթաթախ ճիրաններով»:

Ու կանգնեցան հսկայաբար
Հազարավորք՝ աչք բոցահատ,
Իրենց անեղ սարից հավասար
Բարձրացուցած գոռոզ ճակատ:

Բայց ուր կերթա այն զեղազեմ
Ազջիկ թուռցյալ լերանց վըրան,
Փափուկ թեթև օտիցն ի ճեմ,
Ուսից վըրան հերքըն ծըփան:

Ի՞նչ է այն, որ կուրծքըն սըխմե:—
Բոցանըշույլ զըրան մի լայն,
Ի՞նչ զըզվանոք նա համբուրե,
— Ճակատամուղ երկնթն է այն:

Նա այլ զըզվանք և այլ համբույլ՝
Կուռան անրիժ՝ դեռ չըզգիտեր,
Երախայրի սրաին ի բույլ
Ցուլաց միայն ազգին յուր սեր:

Օրհնյալ անմահ դու Քաջություն,
Պըսակ լանջաց Ազատության,
Որ զհրեղեն վառես Զվարթուն
Եվ զսիրտ քնքուշ հայ աղջըկան:

Դու մեկ օր մ'ալ յանհուն թեեր
Պիտի թըռչիս ի Հայաստան,
Մեկ ձեռքով զայն կանգնես ի վեր,
Մյուսով զլորես թուրքըն կործան:

Տես ինչպես քաջ կույս Հայկունին
Խրախույս կարգա գոռ բարբառով:

«Հառնջ, մոտ կա ժանտ թըշնամին,
Զինք վանեցեք կոտորածով»:

Տեսին հսկայք զայն անավոր,
Ծափ ըզծափի մեծ աղաղակ
Որոտացին ցըվիհըս խոր,
Կարծես բամբուռն հանեց կայծակ:

Հայկուհին է, տեսեք ասա
Կրակներ թափին յուր աչքերին,
Հայկուհին է, որ թըռչի գա,
Ինչպես հրեշտակ ըսպառազեն:

Որպես շանթից հրավառ նիզակ
Զարնե կառափ մեր հաղթ լերանց
Այնպես զարնենք այն ավազակ
Թըրքին գըլուխն արյունախանձ:

Ինչպես մղջալ ի փոթորկաց
Գլորին ժայտից մեր հատորներ,
Հնպա, այնպես ի մեջ թըրքաց
Իյնանք թավալ օրհատաբեր:

Հայկուհին է, կտրիճ եղեք,
Հայկուհին տա խրախուշս հորդոր.
Ժանտից վըրա հուր տեղացեք
Մինչև մոխիր գառնան բուր:

Ու շանթեցին, հարցեք, ո՞ւր է
Այն բազմամբոխ թըրքին բանակ,
Սկափրփուր շունչն արձըկե
Զեյթունցիին սաքերուն տակ:

Այդ կույսն աղվոր ո՞ւսաի կուգա,
Թոռուցյալ գըվարթ լերանց վըրան
— Պատերազմեն նա կու գառնա
Հերաց վըրա գափինինք շոգան:

13. ԱՌ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՕՐԻՈՐԴՍ

Ե Ր Գ

Շատ դարերու ցովերով,
Տրտում տըխուր ողբական,
Ի գերեզմանս նստելով
Արցունք թափե Հայաստան.
Ո՛ր կույսք, փունջ մի քաղեցե՛ք,
Եկեք իրեն մոտեցե՛ք:

Եվ պար առյալ վայելուչ,
Ո՛վ դուք ժրպիտք հայ հուսո,
Երգեցե՛ք երգ սքտառուչ
Ըզդարձ բախտին և լուսո.
Ո՛ր կույսք, փունջ մի քաղեցե՛ք,
Եկե՛ք իրեն մոտեցե՛ք:

Փունջ մ'ալ անգին իմաստից
Եվ զխտությանց ծագկավեա,
Պարկեշտագեղ բարոյից
Որով պարծի նա հավեա.
Ո՛ր կույսք, փունջ մի քաղեցե՛ք
Եվ զայն իրեն մատուցե՛ք:

Հրավեր տըլեք սըրտաթունդ,
Ու քաջալանջ պատանիք
Թող սըլանան գունդադունդ
Հոն, ուր կոչեն Հայրենիք.
Ո՛ր կույսք, փունջ մի քաղեցե՛ք,
Նոցա հակտին մատուցե՛ք:

Ճարտար մատամք ձեր հորդոր
Գեղեցկահյուս բանվածով,
Դուք հայ փառաց սըգավոր
Հորինեցեք թագ շուտով.
Ո՛ր հույսք, իրեն մոտեցե՛ք
Ու դայն յուր գլուխը դըրե՛ք:

Դադրին նըվազք սղբերգու,
Սրբե արցունքն Հայաստան,
Զի հույս զըվարթ օրերու
Աղջկունք Հայոց իրեն տան.
Ո՛ր հույսք, իրեն մոտեցե՛ք
Ու թագն յուր գլուխը դըրե՛ք:

14. ՉԵՆ ԵՐՁԱՆԻԿ

Ո՞ր մահկանացուն այս երկրի վրա
Երջանիկ ժամեր վայելիլ կրնա,
Եվ սրն է այն վարդ՝ ծլած աշխարհիս,
Որ ձեռքերուդ մեջ խալույն չթողմի:

Ո՞հ, չեք երջանիկ, ս՛հ, դժբախտ հայեր,
Մինչդեռ Հայրենիք չեք մխիթարեր:

Թե մտքով գրկես երկիրն ու երկին,
Եվ ամեն գաղանիք քեզ մերկանային,
Անհնար է քեզ ըլլալ երջանիկ
Այդ գժխեմ բախտին թշվառ խաղալիք:

Ո՞հ, չեք երջանիկ, ս՛հ, դժբախտ հայեր,
Մինչդեռ Հայրենիք չեք մխիթարեր:

Իդուր դյուցազունք պատերազմական
Դաշտերու վրա կանգնեցին նշան,
Հազիվ ստացան հաղթության պտակ,
Կորցեց ձեռներես գայն մահու հրեշտակ:

Ո՞հ, չեք երջանիկ, ս՛հ, դժբախտ հայեր,
Մինչդեռ Հայրենիք չեք մխիթարեր:

15. ԾԵՐՆ ՎԱՆԱ

Ե Ր Գ

Մտի՛ք է գիշերս, ինչպես սիրտս ալ,
Ծո՛ղ թուխ ալիք մշտափրփուր
Վան՞ա ծովուն ծիածալալ
Հառաչանոք լի են արխուր:

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս:

Ո՛վ նազունի դուստր իմ Մեհեկ,
Շուշան և վարդ գաշաաց մերոց,
Եկո՛ւ, և հորբդ ծերուկ ու հեք
Առաջնորդի՛ ի Չորն Հայոց:

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս:

Դու սիրտտարփ կարի՛ճ Արասկ
Տըխուր երգեց, ս՛հ, այս գիշեր.
Սերն էր երզոց յուր նըպատակ,
Բայց Թորգոմա զաղեա՞ն հիշեր:

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս:

«Ո՛հ, ինչվան երբ հաճույք և սեր
Առանց սուղի պիտի չըլլան».
Այսպես ի քնարն յուր նա երգեր,
Ու արցունքով աչք մեր լըցան:

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս:

Հոս են շիրիմք մեր նախահարց,
Նոճ մի ունի ամեն դաժբան,
Երբ փոթորիկ գոսա հանկարծ,
Հեծեն՝ ննջող սգվոց փոխան:

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս:

Հին են ցավերս, հեծեմ և ես.
Փամ է իջնամ ի գերեզման,
Երթամ վեհից հայոցն ի աես,
Վանա կոհակք թող գիտ սղբան:

Եվ դու Մեհեկ, կուլմս անհույս,
Ո՛հ, ո՛չ, գընն... գա Արշալույս:

16. ՄԱՐԵ

Մնասցես բարյավ, սեր իմ սեր,
Հրավեր մարտից սրտոաց,
Թե չիմ քաջաց ես ընկեր՝
Չըկն բաժին ինձ փառաց:

Մի լար, հոգվույս իմ հասնո՞ր,
Գուցի դառնամ, ո՞հ, մի լար:
Թ'անկայց մարտին ես ի գոռ,
Տեսցուք յերկինս մենք զիրար:

Եղբայրադավ չէ նախանձ,
Որ բոբբոքյալ յիս վառի,
Ի սուրբ հողս Հայրենյաց
Քառնամ ըզլուծ օտարի:

17. ԱՌ ԳՐԻԳՈՐ ԷՖԵՆՏԻ ՕՏՅԱՆ

Գիտե՛մ, ազնիվդ, ըզգառնություն գիտեմ անդարձ բաժանման.
 Գիտե՛մ ի՛նչ, թե ինչ կըզգա սիրտ բոցաթեև որ կը թըռչի
 Գորովանացն յիւր բունիկ, ու զայն պարապ կը գտնա,
 Պարսպ՝ ծոցիկն հայրենի, որ չէր հոգներ ի գգվելս
 Ան անշեջ սիրունյն ջերմությամբ միշտ տաքցըներ ըզսիրտ
որգվոց,

Եվ ուր անժուշտ գիմեին գութ և կարոտ յուր նազելյաց,
 Իդձբ հարսին և դըստերաց և թուռնեկին մանրիկ ժըպիտ,
 Ար վարդաթիթ շրթունքներով կյանըս մաղթեր անուշ պապուն:
 Գիտեմ թե ի՛նչ կըզգա սիրտ, երբ որբ մընա ի համբուրին,
 Ար միմիայն շքքեղ է վարձ և քաջալեր սիրահորդոր,
 Քան զոր պայծառ հաղթանակ չըկա քրտանց յուր որդեկին.
 Եվ ոչ գափնիք աջնչափ փառքեր թափեն անոր ճակտին վըրս:
 Ա՛հ, մանկության իմ օրերուս՝ անցա լեղի այդ փորձեն.
 Եվ որ հաճույք կընան ըզքեղ գըկկլ, երբ զոց են հոր գըկերն,
 Համբույր չունին յուր շըրթներն, հայաց չունին վառվուռն
աչքունք,

Եվ ուրիշ բան չի մնար իրմե... բայց սուրբ հիշատակ,
 Սակայն ոչ թե միայն սուրբ, այլև անմեռ է հիշատակ,
 Որով անեղձ և կենդանի ի շրջանակն իսկ տաղանին
 Պիտի տեսնես ըզպատկեր քու սիրայնո վեհազըն հոր,
 Պիտի տեսնես ըզկերպարանն և ըզճակատ լայնակամար՝
 Աւր ձեռք ձեռքի վըսեմություն և հեզություն բընակեին.
 Եվ ուր խորհուրդք առաքինիք կարծես ի գահ միշտ բազմեին-
 Եվ թե երբեմն ի գիշերի նըսեմատովեր նոճյաց մեջին
 Զայն մի ահանջըզ գարնե, ի՛նչ, մի կարծեր, ի՛նչ բարեկամ,
 Թե ողբական շըշունչ է այն հոգմակոծիկ տերևներուն.

Չէ՛ այն վըտակ, որ հառաչե, չէ՛ այն թըռչուն, որ ճըվճըվա,
Չայն հեշտալուր է, ձայն, որ ըզքեզ զրզե դարձյալ
Սիրել ինչ որ գեղեցիկ է, ինչ, որ բարի և վըսեմ:
Վե՛ր կաց ուրեմն ի դամբանեն, նայե՛ չորս դի, չըկա՞ քու հայր...
Բայց աղեկեզ կա մայրիկ, բայց կան քուրեր արտասովոր,
Ընկերք ցավոց կան քեզ եզրաբք և աչես եզրոր մեկ բարեկամ...
Ու ասոնցմե շատ ավելի՛ կո՞ սըգավոր մեկ Հայրենիք...

18. Ի ՏԱՐԱԺԱՍ ՄԱՀ ԳԱՐԻԵԼԻ ԵՐԱՆՅԱՆ
Հ ԻՄՆԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՔՆԱՐ»-Ի

Ի ու ցուրա շիրմիդ վըրա ուր, վան, կա թաղված
Առույդ հասակդ և սըրաիդ հուր երկնասլաց,
Ձէ՛ թե միայն սըփոհնք ծաղիկ լի ձեռքով,
Ձէ՛ թե միայն արցունք անհուն ցավերով.

Այլ և ձոնենք վշաահար
Երգերն անուշ Քընարին,
Որո փափուկ թելերը
Դու հյուսեցիր սրտագին:

Այն նըվագներն, որ բերենդ սըլացան
Երթալ յողջոյն ալերակաց ցիր ու ցան,
Լըսեց զանոնք ի դամբանացն Հայրենիք
Եվ սփոփեցան Հայաստանյայց վե՛հ ոգիք.

Լըսե՛ զանոնք և դու այլ,
Մահվան քունեն արթընցիբ,
Այն Քընարին թելերով
Յանմահութիւն և՛ թըռիբ:

19. ԵՐԳ

Անուշ աշխուշ կերպարան,
Շնորհաց սիրո բնակարան,
Բարքով հեղիկ ազավնի,
Խոսքըն մընչյուն գեղանի.
Ո՞վ է արդյոք, թող զրուցեն —
Եվ փիմեն:

Այն երեսն հուր ելավ,
Այն աչքերն նեա թըռավ,
Չեմ գիմանար բյուր ցավոց,
Չանփորձ հասակս ծախե բոց,
Ո՞վ զիս զարկավ, թող զրուցեն —
Եվ փիմեն:

Ո՞վ երջանիկ Յուսկյուտար,
Ըզքեզ ակ թող չեմ ի տար.
Ա՛յնպես քեզի կապվեցա,
Բաժնըվելու ճար չըկա.
Ո՞վ զիս բըռնեց, թող զրուցեն —
Եվ փիմեն:

20. Ի ՄԱՀ ԱԶՆԻՎԻ ԼՈՒՅՅՅԱՆ

Ո՛ւր ես, Ազնիվ, տեսանք երթալդ,
 Ուրախ դարձիդ չափինք մենք լուր.
 Քեզ գրկելով ճամբա դըրինք,
 Գրկերնիս բաց կըսողասենք զուր.
 Ո՛հ, ամենուն աըխուր ձայնիվ
 Կը հարցընենք. ո՛ւր է Ազնիվ:

Ի՞նչ ավանդներ հանձնեցինք քեզ.
 Մորդ ու քըրոջդ արտասովազին,
 Հարադատիդ և մըտերմաց
 Այրած սրտերն ու ողջույնն հեաին:
 Երբ գաս մեզի ուրախ դարձիվ,
 Ի՞նչ փոխարեն բերես, Ազնիվ:

Ու դեռ ինչեր ենք պատրաստեր,
 Թե զքեզ նորեն գրկենք սիրով.
 Քեզի նըման ծաղկի փունջեր
 Ու հանդեսներ ցնծուն պարով.
 Բայց սրտերնիս լի է ահիվ.
 Ո՛հ կուշանաս, ինչո՞ւ, Ազնիվ:

Ավա՛ղ, տեսեք, սուզ առալ ծով.
 Զինքը տանող դարձավ հովիկ,
 Թեևրըն կախ փըչե տրտում.
 Ի՞նչ լուր բերիր մեզի, հովիկ.
 Այն ձեր սրտի հատորն ազնիվ
 Թըռավ գընաց, մեռավ Ազնիվ:

Վա՛խ, չունեցար, սիրուն Ազնիվ,
Գունե արխուր հողին վըրա
Արցունքներով մեկ թաց շերիմ,
Այս խոսքերով կանգներ վըկա.
«Հոս իր բարբով, դիմոքն ազնիվ
Ծաղկահասակ նընջե Ազնիվ»:

Ու չը լըսես պիտի, ամսո՞ս,
Բու սիրելյաց չորս դիգ բոլոր
Աղեկիդիկ հառաչանքներն,
Ոչ սոխակին երգ սըգավոր.
Եվ ոչ երկինք ու աստղունք անթիվ
Անուշ ցողով լան քեզ, Ազնիվ:

Թառամեցավ ծովընկեցիկ
Փափկասուն վարդ յուր հասակին.
Աղի ալյաց անդունդին մեջ
Շիջավ արև այն կըտրիճին.
Հավերժհարսունք գիսախըռիվ
Ծովուն մինակ լան քեզ, Ազնիվ:

21. ՍՈՒ ԳՈՆԱՐԻԿ

Ո՞վ է պղտիկն այն աղջիկ,
Սիրուն, ազվոր և փափկիկ,
Սև մազերով, սև աչքով,
Ինքը բոլոր խառուտիկ.
Ո՞հ, այն աղջիկ
է Գոհարիկ:

Երբոր իջնա պարտեղիկ
Քաղեւ ըզվարդ կամ հասմիկ,
Դու չես կրնար որոշել՝
Ո՞վ է վարդ, ո՞վ Գոհարիկ.
Ո՞հ, այն աղջիկ
է Գոհարիկ:

Երբոր թըռչուն ճըվճըվա,
Երբոր վառյակ կըտկըտա,
Դու չես գիտեր՝ թըռչունն է,
Չէ նե Գոհար, որ ձայն տա.
Ո՞հ, այն աղջիկ
է Գոհարիկ:

Գոհարիկն է այն ծաղիկ,
Գոհարիկն է այն թռչնիկ,
Որ այս տողիս փոխարեն
Ինձի արվավ մեկ պաշիկ.
Ո՞հ, այն աղջիկ
է Գոհարիկ:

Ո՞վ է պղտիկն այն աղջիկ,
Անհրնազանդ, չարածճիկ,
Որ շատ անգամ տունին մեջ
Հարուցանե փոթորիկ:

Չէ, այն աղջիկ

Չէ, Գոհարիկ:

22. ԵՐԳ

Անմահ, անուշ դու գինի,
 Շատ սիրելի ես քաջին,
 Զի գուշնդ արյան նրմանի
 Պատերազմաց ի դաշտին.
 Բոսորափայլ քո փրփուր,
 Որ մեզ ի կտիվ փրչե հուր:
 Թե հաշտությունս գա արդար՝
 Փոխի ի ցող զտվարար:

Դափնիք քեզմով կառնեն ույժ,
 Կարմիր, կրակոս դու գինի.
 Քեզմով զըվարթ և աշխույժ
 Կըլա հեզիկ ձիթենի.
 Քեզմով վառի բոցազույն
 Օրիորդին համեստ գուշն.
 Կեցցեն մեր քաջ պատանիք
 Եվ նազելի գեղանիք:

23. ՀԱՆԵԼՈՒԿ

Թե որ կուգես զիս ճանչնալ
 Վերարկուես մի խարվիր.
 Իմ մտկանունս չունեցող
 Պըտուղք համով չեն ուսվիր.
 Տաճկերեն ինչ ըսել եմ՝
 Ջանն աղեկ գիտնալու,
 Առանց անսր՝ կարկանդակ
 Դուն չես կրնար ուտելու.
 Երկրորդն յեօթանց բռնավոր
 Տիրե սրաի իմ վըրա,
 Ու ես անսր գորությամբն
 Մատենագիր մը եղա.
 Իմ անունըս իմաստունք
 Հիշեն արգար բարկությամբ,
 Սարկավագունք՝ կրգելով,
 Տըզեաք՝ անմիտ հարգությամբ.
 Անունով մեծ ճգնավոր
 Ու եմ հովիվ պաշտոնով.
 Գործքով՝ գիտնաս ինչ ըլլալս,
 Պիտի գողաս սարսափով:

24. ԳՆԱՅԷ՛Ք, ԻՄ ՏԱՂՔ ԻՄ ՏԱՂՔ

Գնացէ՛ք, իմ տաղք, ոչ թէ յեթեր
Ուր շող և փայլ և հով ժպտին,
Եւ ուր զուարթնոյն վարսք լուսահեր՝
Ծալ ծալ ի ճեմս իւր ծածանին:

Գնացէ՛ք, իմ տաղք, ոչ ի կամար
Ուր լուսափթիթ ծաղկունք երկնից
Իբր զըրասանգ ականց զոհար՝
Կախեալ ցոյան յուրս փնջից:

Գնացէ՛ք, իմ տաղք, ոչ թէ ի ծոց
Չարմանահրաշ սիրոյ բնութեան
Որ ի յաւիւն ի հուր 'ւ ի բոց
Վառէ, գրկէ, տածէ զհամայն:

Գնացէ՛ք, իմ տաղք, ոչ ի պարերգ
Օղաթըրոիչ այն Սիլֆիտաց
Որ յասպարէզ կապուտաներկ
Կայթեն հողմոյն ի սուղ նուագաց:

Գնացէ՛ք, իմ տաղք, գնացէ՛ք առ կոյս,
Գնացէ՛ք մեղմով և պատկառոտ
Ծաւի աչաց նորա ի լոյս
Զըւարթացէ՛ք անձկակարօտ:

Եւ թէ անոյշ ձեզ ակնարկեաց,
Իբրև զերամ թոչնոց յուշիկ
Դուք թառեցէ՛ք իւր խոստովաց
Վերայ, ձեռաց և յուս փափկիկ:

Եւ երբս աղու յօրինելով
Յունիքն նորա ճըռուղեցէ՛ք,
Թէ՛ յարթըմնի թէ՛ ըզքընով
Միշտ ըզնովաւ թեւածեցէ՛ք:

Իցիւ, յորժամ ոչ ևս իմ ձայն
Հասցէ առ նա և կամ իմ շունչ,
Ու ի մտապօնս անկայց համայն,
Պոնեա լըսէր ըզձեր մրմունջ:

25. ՎԵՐԱԴԱՐՁ

Ասէր սգեակ մ'անուշակին.
«Թերթք իմ անկան, բեկաւ ծըղօտ.
Քոյր իմ, երթամ, և ցօղազին
Էացցէ վաղիւ պիտ առաւօտ.
Այլ ոչ ընդ բողբն իմ հառաչեմ
Որ պիտ ընկճէ ի դալարեոջ.
Յորժամ գարուն գայ ծաղկածեմ,
Նագիմ գարձեալ ես յիմ բողբոջ»:

«Իսկ ես, ասէր այգուց ցօղիկ,
Ի տերեւոց պոռիմ ի ծոց.
Ինձ փարելի՛ ծաղկանց ցեղիկ,
Նոցա այտեր՝ ինձ հանդրսոց.
Այլ զիս կիզու ս՛հ, արեակ...
Մի, մի՛ տխրիր, վճրդ սիրեցեալ.
Գայցէ պիշեր և կարմրորակ
Ի քո ծոցիկ եկից գարձեալ»:

Անգուստ ստիակ ի պուրակին
Յեաին նըւազ գայս յեղյեղէր.
«Ողջամբ մընայք, ջուրք առուակին,
Ողջամբ՝ ծրմակք նըսեմաստուեր,
Այլ մինչ նորոզ գայ Ապրիլէլ
Եւ գարթիցեն պեղ դալարիք,
Յիմ հովանիս եկից թառել,
Սլասցին գարձեալ իմ գայալիկք»:

Եւ դու, վըտակ տխրակարկաջ,
Ջր՞ այդ մըմունջ բո սրտացաւ.
«Լըւարուք, դաշաք, սհ, դիմ հառաջ.
Վըճիտ ազբիւրս ցամաքեցաւ.
Այլ ձիւնարեքք մինչ ի լերանց
Գայցեն գերկիր արբուցանել,
Ես ի միջոյ փափուկ ձըղեաց
Եկից դարձեալ հեղիկ սահել»:

Շողն արփենւոյն ընդ երեկոյս
Յիւրն օրհասին ամպոց վերայ
Ազօտափայլ դողդոջ մի լոյս
Տայր ընդ ոլորտըս բացակայ.
«Սակայն, ասէր, երկի՛ր ծաւալ,
Ծով ծիրանի, առնում ձեզ այց.
Ընդ աշալուշ վաղիւ դարձեալ
Յոյժ առաւել ես փայլեցայց»:

Այսպէս անա ծագիկ և ցօղ,
Սոխակն անոյշ, անոյշ առուակ
Եվ արփենւոյն կենսաբեր շող
Մեկնին, սակայն դառնան հրազ.
Եւ դ՞ու, կուսի՛կ, դու որ դեռ նոր
Ծածկեալ ի հող մատաղ ըզտիս
Տարեր ըզգեղոյ, ըզրոյր և շնորհ,
Ա՛հ, դ՞ու միայն ոչ եւս դարձցիս:

26. ԵՐԳ

Վարդ մի գունեան և յոյժ փափկիկ
Փթթեալ թերթիւք բոյր ի բոյր,
Նըւաղեցաւ մերկ ի գեղոյն
Ի տապ բոցոյ անմաքուր:

Վայրընկեցիկ ի փառաց,
Ո՞ ալ զիցէ նըմին շուք,
Կամ պըճնեսցէ ըզգըլուի
Թառամելոյ այն ծաղկամբ:

Պատանեկին խանդակաթ
Եղճուկ սիրոյն դըժբանաց,
Դառըն լեզի էր ըմպելոց,
Ոչ թէ վայելք զըզուանաց:

Վայրընկեցիկ ի փառաց,
Ո՞ ալ զիցէ նըմին շուք,
Կամ պըճնեսցէ ըզգըլուի
Թառամելոյ այն ծաղկամբ:

27. ԵՐԳ ՄՕՐ Ի ՎԵՐԱՅ
ՄԱՆԿԱՆ ՆՆՁԵԼՈՅ

Հանգիր մանուկս աչօք վըճիտ,
Հանգիր անոյշ յօրօրոցիդ:
Այդ հրաշագեղ գոհար բըբունք
Ի յարթնութեանդ միշտ երերունք,
Ոհ զի՛ խաղաղ և անշարժիկ
Փակեալ ի նինջ են աւասիկ:
Շըթունքդ շուշանք լըցեալ շաղով
Եւ գիրդ մարմինդ ցրկնից գեղով:
Ննջեան մանուկս աչօք վըճիտ,
Ննջեան յանդորր յօրօրոցիդ:
Ցօղն ի վերայ վարդին թերթից,
Իմ ցօղ աչաց վառ վառ այտիցդ
Թշուառ մանկիկ, քեզ մօր միակ
Ո՛հ անժըպիտ են գորովանք,
Ձուրկ ի նազուկ յայս տիս ամբիծ
Հօր կաթոգին ի համբուրից
Որ ի գգուանս իւր սիրակէզ
Այսպէս փափկիկ ծընաւ ըզքեզ:
Աւա՛ղ ի մէնջ գնաց հեռի,
Թող ըզքեզ որբ և զիս այրի,
Ձանդրանիկն իւր որդեակ չըքնազ
Եւ զտարփալի հարսըն մատաղ:
Ոչ գողտրական քեզ այլ եղբայր
Լիցի ընկեր սիրապատար,
Դու անմեղուկ իմ աղաւնեակ,
Դու ինձ միայն մնացեր որդեակ:
Այլ մեք լըքեալ թողաք անտէր.

Եւ մինչ ես մայրդ քեզ առննիւր
Ըզցայդ ցերեկ ի կոծ անրաւ
Աղեխորով մաշիմ ի ցաւ,
Ժպտես ճչես քաղցրախօսիկ
Կամ յօրօցիդ հանգչիս հեղիկ.
Եւ քո հայրիկ ի հող տըխուր
Գերեզմանաց անդր ի բըլուր
Շուրջ պար առեալ նոճեաց ի սեաւ,
Ննջէ մահուն ընդ ցուրտ շիրմաւ:
Արդ ի շրթունսդ իսկ վարդածոյլ
Զըւարթութեան փայլէ նըշոյլ.
Ընդէ՞ր երեսքըդ ժըպտեցան.
Հրեշտակք եղեն քեզ յանդիման
Խաղապատին ըզքն անոյշ.
Ի համբուրիկս նոքա քընքոյշ.
Մին ձիւնափայլ պարանոցիկդ,
Այլք ըզթաթիկըս քո փափկիկ,
Եւ յանուանէդ ըզքեզ ձայնն
Կամ շուրջ ըզքն պար բոլորեն.
Այլք խաղալով ընդ քոյդ օրոց
Յունկնըդ մնչեն ձանիկս հրզոց.
«Ի քո քաղցրիկ մօրէդ ծածուկ
Մանկիկ, յերկինս եկ փախիցուք».
Եւ քոյդ արդեօք թռեաւ հոգեակ...
Զարթի՛ր, զարթի՛ր իմ աղաւնեակ.
Կաթն անուշիկ քընոյդ փոխան
Քեզ ջամբեցից մեղրածորան:

28. ԱՐՏԱՍՈՒՔ ԿՈՒՍԻՆ

Ե Ր Գ

Լաց, ս կուսիկ, զի արտասուք
 Կուսին ի բիր են մարգըրիտ,
 Լաց, ս կուսիկ, զի տրամասուգ՝
 Չքնաղ եւս են աչկունք վըճիտ:

Ըզփափկամէջք սիրեմ ծաղիկ
 Որ ի դաշտին կայ պատկառուկ,
 Ըզնա գիշերց պճնէ ցօղիկ,
 Արտօսը ըզպուխն առնէ կախուկ:

Սիրեմ ըզշոյս ես լուսարփի
 Որ ի նամէտ ծոցոյ ամպոյն
 Ի ծով ծաւալ փայլ ըզփայլի
 Ոսկի հերաց ցոլան հանգոյն:

Ձանման փափուկ սիրեմ հրեշտակ
 Որ ըզբիմօքն ածեալ թեւեր,
 Մատուէք ի քնար տըխրահոչակ,
 Լայ ըզմարդկան՝ ւ երկրի զաւեր:

Լաց, ս կուսիկ, և Գըթութիւն
 Ոչ սրբէ դայն շիթս անուշիկ,
 Այլ կայ յակճիտ և ըզմայլուն,
 Այնքա՛ն, թէ լաս, ես գեղեցիկ:

Լաց, ս կուսիկ, մինչեւ յերկնից
 Իջցէ դալար երջանկութիւն,
 Եւ գգուեսցէ զայտերդ ամբիծ
 Եվ ըզգըլթիկդ այն զրգասուն:

Թուխ աներոյդ տացէ համբոյժ՝
Զարտօսք անտի սրբել ի սպառ-
նւ իբր ի բոց անուշաբույր
Հալեալ ցնդին շիթք լուսավառ:

29. ՔՆԱՐ ԿՈՒՍԻՆ

Նըստէի ի մութ գիշեր ի բարձրագէտ բըլրոյն կատար,
 եւ զուրուականս ամպոց յեթեր հիւսիս վարէր հալածական.
 Մերթ ընդ մերթ փայլատակունք ցոլանային ի հանդիպոյ,
 թըւէր ոգւոյն ամպրոպաց ըզհրանըշոյլ սուր իւր ճօճել:
 Բազմահոյլք իսկ յիմ ճակատ տատանէին ծուփք խորհրդոց.
 Հայրենին իմ աշխարհ յիշատակօք արտատուելի
 եւ ամենայն շիջեալ իւր փառք կանգնեալ կային ինձ յանդիման,
 եւ միտք իմ բարձրաթոխչ եղեալ արծուոյ հանգունատիպ.
 Խոյանար և թափառիկ շըրջեր ի դաշտս Հայաստանի,
 եւ դադարէր մօտ ի բըլուր գերեզմանաց իւր դիւցաղանց:
 Անդ խիտ առ խիտ նսճեաց շարք ամբառնային նըսեմաստուեր,
 եւ ուռնիք արտասուաթորք՝ սըգալից ոտքըն վայրահակ:
 Ո՛չ մի ձայն, ո՛չ մի շըշուենջ, մահ և մըռայլ բազմին անդէն.
 Խուլ հնչի՛ւն միայն հողմոց ընդ սօսափիւնս թաւուտ սստոց
 Յօրինէին եղերերգ, թըւէր մեռեալ ոգւոց մըրմունջ,
 կամ ողբոց ձայնակցութիւնք գերեզմանաց ի գերեզմանս:
 Եւ անա բացան յանկարծ շիրիմքըն, վէմք թաւալեցան,
 ի վի՛ր ընդօտեան հոյլք մեռելատիպ ուրուականաց՝
 Գիշերոյ որպէս հըսկայք՝ ի խորանիստ իւրեանց յայրէն.
 Աչս մեծամեծս ընդ չորս բոլոր շուրջանակի յածեցուցեալ,
 Աւաղալի կերկեր հառաչ խոր ի սրտից հեղձամըղձուկ
 Հընչեցուցին յամայիս առիւծատիպ որպէս մորնչիւն:
 «Ո՛հ, մի՛ տըխրիք, ո՛վ հեղինակք և փառք Հայոց աշխարհի,
 Մըռայլ ի վի՛հ ապագայից խոնարհեցէ՛ք հըսկայաբար.

Գալ առ ձեզ տեսչիք յայնժամ համատարած ըզձեր համբաւ
ի թեւս սըրարչաւ ժամանակացն ուղեւորեալ:
Տեսչիք դանուան ձեր արձագանք թըրուցիկ դար ի դարէն:
Քերթողուհի Կոյսն էր Հայոց որ նըւագէր զայս քընարաւ,
Կոյս զոր գեղ և փափկուեթիւն փայփայէին և զըզուէին,
Ում ասողունք ըզշողն ամբիծ և զփայլն իւրեանց շընորհեալ,
Եւ ծաղկունք ըզբոյր իւրեանց բոլոր նըմա տըւեալ պարգև,
Եւ սոխակ գիշերախօս զիւր ըզձայնիկ հոգեզըւարճ,
Ձի նագելի և զըզուելի էր Կոյսն համայն անմահ բնութեան:
Դարձեալ երգեաց. և յանկարծ երկնից մութ դէմք պայծառացան,
Լոյս սըփոեցաւ յանտառին, ի շող աստեղց փայլին հոճիք:
Ջըւարթացան հըսկայքն Հայոց, ելին ի պար բոլորեցան,
Ի թինդ ոտից կայթեցին վերայ վիմաց դամբանական:
Եւ Կոյսն երգէր, և հըսկայքն մըտին իւրեանց ի քընարանն,
Եւ քնարն անուշ փափուկ Կուսին դեռ սրորէ ըզքուն հոցա:

30. ՆԵՐԵԱ՝ ԻՆՁ, ԿՈՅՍ

Ներեա՛ ինձ, կո՛յս, մի՛ պտարփելի՛ր զերեսդ յինէն՝ դարձուցաներ.
Գիտե՛ս, ըզդէ՛մօզ եթէ՛ ծածկես՝ գիշեր լինի՛ ինձ, ո՛ր կոյս.

Ըզշող բըբացդ թէ՛ ամփոփե՛ս՝ աչկու՛նքս իմ լոյս ոչ տեսանեն
Եւ գանդահե՛մ յաղջամուզջ կոյս, և կարկուտե՛մ բագուկ՝ դողդոջ
Խնդրե՛մ ըզքեզ, խնդրե՛մ զերկինս, խնդրե՛մ զարև և զաստեղս...

Ա՛հ, դու ոչ գոս, և մոլորեալ պանդուխտ ուրդին եմ ես բնութեան
Չայնիկ մի ինձ լրտեցո՛՛ և այն լիցի ինձ առաջնորդ,

Որպէ՛ս սգիք զերեղմանաց երկնահնչակ նուագաց ի թևս
Լըքեալ շիրմաց ըզմութ՝ մըռայլ ի վեր, ի վեր ճախրեն մեզմով,
Չայնիկ մի ինձ լրտեցո՛՛ գորպիսի դու միայն ունիս,

Եւ վերջստին գրտանե՛մ ըզլոյս, զաստեղս, զամենայն ինչ:

Ներեա՛ ինձ, կո՛յս, մի՛թէ՛ չիցե՛ս գըթած, քընքուշ, չիցե՛ս

հրեշտակ,

Մի՛թէ՛ հրեշտակք բարկանայցե՛ն, մի՛թէ՛ զեփիւռ սըրտմըտիցէ՛,
Մի՛թէ՛ ծագկու՛նք բուրմանց փոխան ըզհուր և բոց ծաւալիցե՛ն:

Ներեա՛ ինձ, կո՛յս. ներեա՛, հրեշտակդ. ո՛հ միանգամ թէ՛ գիտէ՛ր

Յո՛ր աւերակս թշուառ սրտիս զիս նագելին եգիտ քո սէր,

Յո՛ր փըշարեր ամայութեանց զիս ի դըրախտ վերադարձոյց.

Մի՛թէ՛ անդէն յիտս ընդ կըրունկն. ես ի շնորհացդ յաքսոր

գարձայց

Եւ դու ըզչուս արտասուաթոր տեսցես աչօք անկարեկի՛ր:

Ներեա՛ ինձ, կո՛յս երկնացեղիկ առ քո սգեակ ես աղերսեմ,

Արկ ըզբեհեզ գըթութեանդ որ ծածկեսցէ ըզյանցանս իմ:

Ներեա՛ ինձ, կո՛յս, եթէ՛ սաստիկ բանք քո հարին յիս վըրդովս.

Զի խոր անդունդ է ծով սրտիս, վասն այն ուժգին փոթորիկեցաւ.

Ներեա՛ ինձ, կո՛յս...

Յիշեան զիս, կո՛յս, յորժամ զըլուխդ հանդչի ի բարձ փափկեկ
 թեցդ
 Եւ զթռչնեկին ննջես ըզքուն. յիշեան զիս, կո՛յս, յորժամ անուրջք
 Աշխոյժ և հոյլ երամոյլ զեղապարեն առ սընարազ.
 Յիշեա՛, զիս, կո՛յս, յորժամ դաշկունսըզ մեծամեծ և լուսուլիբ
 Բանանս յողջոյն շողից արփուռն՝ թողեալ զքն քոյճ քս զանկողին,
 Լճրոյնըն զաչն անքան գեղոյ պարկեշտատուն այնքան շնորհաց.
 Յիշեան զիս կո՛յս, յորժամ այգուն ձեմիս ի մարդ ցողատարով
 Աընունդ տալ մըտացլբ քոց և երկնաթռիչ խանդից հողույզ
 Զեփիւռիւ առաւօտուց և նըշուլիւ արեգական,
 Համափիւռ ինկով ծաղկանց և սոխակաց նուագածութեամբ.
 Եւ ասաջիբ. «Յորմէհեաէ եսես զիս նա՛ վասն է՞ր արդեօք
 Ոչ ես սիրէ ըզձագիկ ոչ ըզգեփիւռ առաւօտուց,
 Վասըն իւր ցողատարով պարտէզք՝ չունին անուշութիւն,
 Ո՛չ երկինք նըշուլագարդ» ո՛չ աղաւնեակք և ո՛չ սոխակք».
 Յիշեան զիս, կո՛յս, երբ նայելով ի հայելիդ գոչես խաբեալ՝
 «Զի՛ գեղեցիկ զի՛ սիրուն, զի՛ չարածձիկ է այս պատկեր»,
 Եւ բիւր մանեակս յօրինես ի յուրից սամոյր վարսիցդ,
 Եւ մանկական գողորիկ ձեօք ժըպտիս խողաս ընդ պատկերիդ.
 Ո՛հ ասաջիբ և յաչեմ, կո՛յս. «Բանի՛ցս անգամ ջանացաւ նա
 Համոզակեր ինձ լինել եթէ աչկունքս հն աննըման,
 Եւ թէ մեղուք դայաւս իմ և ըզըրթունս վարդըս կարծեն,
 Եւ թէ հանդոյն եմ հրեշտակաց. արդեօք իրմէ զոր ինչ ասաց»:
 Յիշեան զիս, կո՛յս, երբ բերկրանք ձեան ի ձեռին քեզ տարփացեալ
 Փարին ըզգիբզ քս մարմնով և փայփային զերեսս քո.
 Յիշեան զիս, կո՛յս, երբ աըրամութիւն ըզշնորհագեղ զըլուխդ հակէ
 Զերթ ցօղալից վարդից կոկոն, զսէրն իմ զընեմ այնըմ նեցուկ:
 Յիշեան զիս, կո՛յս, երբ ըզվայրի ո՛հ տեսանես դու ըզձագիկ
 Որ հըսկէ ի վերայ իմ մենաւոր գերեզմանին:

Ուստի՛ յանկարծ ծագէ այս լոյս ՚ի յաղջամուղջ իմ սրտիս,
 Զերթ արևուն շող թափանց ի սեաւ անտառ գերեզմանաց:

Յոյս գեղանի, ոսկեթև զըւարթաթոյնիչ դու թիթեռնիկ,
 Քանիցս արդեօք թևածեալ զմեկամաղձիկ իմ սրտիւ
 Հարար ի բախտն իմ անողոք, և քրճքըճեալ քս ծիրանիք
 Ու ադամանդեայ աչն զարդերդ աւա՛ղ յերկիր թօթափեցան:

Ընդ վայր իմովրս ձեռամբ ևս ըզճակատ քս պճնեցի,
 Եւ դափնիդեայ մի ընձիւղ ոլորեցի քեզ ի պըսակ
 Եւ նըշուլիւ մի սիրոյ ըզքս թևերդ զարդարեցի-

Հէ՛ք թիթեռնիկ, արդ անկենդան անկեալ դընիս յիմ սրտիկ,
 Եւ դամենայն կորուսեալ սրտիս ՚ի մտայլ ծածկեմ ի վիճ...

Զաչըս փակեմ չըտեսանել եթէ զիմօրդ պարեն պտտեղք,
 Զիմրդ ծագիունք փունջ կապեն և կամ ընութիւն նազի յիւր
 դան:

Ի բրև ըզճիւղ մի կիպարին ևս խոնարճիմ ի գերեզմանն
 Յուսոց իմոց և բաստից և լուսաթոյր երջանկութեան:

Սակայն ուստի՛ ծագէ յանկարծ լոյս, ի խաւար իմ սրտիս...
 Ո՛հ զինչ տեսիլ միթէ հրեշտակ, կոյս, կամ մանուկ գեղաշնորհ
 Որ յիս մօտի և մամանիչ առնէ զգաւտոս ինձ լուսոյ:

Որ ատելի և անհանդոյրժ էին տիեզերք աչաց իմոց
 Նա արդ բնութեան գեղով, զարդու, շքով լինի ինձ յանդիման.
 Ո՛ր իցես դու արդեօք հրեշտակք, անշուշտ ճանաչէք դուք,
 Զի քոյր թըլի նա հրեշտակաց դուք ճանաչէք ըզմաքրափայլ
 Ըզճակատն, ուր գա բազմի ժպտի շիկնի պարկեշտութիւն,
 Եւ գայն ծիծաղ իւր շրթանց ոյր չիք անտուն յազանց լիզուս,
 Եւ զմանկունի իւր աշտերն, և ըզխոպոպսըն գեղահոյլ

Եւ զերկինս որ 'ի վրճիտ լուսապարեն ի սեաւ աշկունս:
Ըզսիրտ նորա և ըզհոգեակ անշուշտ, հրեշտակք, դուք ճանաչէք,
Ամենեկն ի պատկեր չըքնաղ մարմնոյն ձեռալ են այնք:
Եկ, ս' կուսիկ, որ ի վըշուտ կենացս ուղի երևեցար,
Հրաշատեսիկ երևոյթ, և զճանապարհն իմ լըցուցեր
Խնկով վարսիցդ և երեսաց, լուսով բըբացդ և նայուածոց,
Մինչչև անցեալ, եկ, ս' կուսիկ, շուշանափայլ քո զուլանէդ
Կախեմ մանեակ ըզսաղս իմ գայս՝ քնդելուզեալ յայն զիմ
սրտիկ,
Եվ ապա անց թըսիր, ս' կոյս, ես մընացից յամայութեանս,
Զի աննըշան միջատի չիք թոյլ յերկնից աստեղս թեևը:

33. ՅԵՏԻՆ ՀԱՌԱՋԲ

Որպէս այր օրճատական ի յանկողնոյն իւր ի ցաւոց
 Լզնուակ ողջոյն և ըզկարօտ թըռուցանէ առ լոյս արփուոյն,
 Առ ծով, առ մարգարօտս, առ դաշտավայր և առ հովիտ,
 Առ հովանիս անտառակին, առ գովութիւնս վըտականւոյն,
 Առ ամենայն, որ խայտայ դարդու, գեղով դաշնակութեամբ,
 Առ ամենայն, որ շընչէ, ցոլայ, ժըպտի և նըւագէ,
 Հանգոյն և ես զիմ հուակ ողջոյն, զիմ հուակ կարօտ հրատուչոր
 Ճամ սլանալ առ քեզ, ո՛ր կոյս, թոյլ տուր յեաին և այս նըւագ
 Հայիլ ի քեզ, պըշնու ի դէմտդ, և աչերոյդ լուղիլ ի լոյս,
 Ի քոյդ խոպրպս պընալ ծածան որպէս և այնք յայտիցդ ի վայր,
 Յետոյ մեկնիլ ի նոցունց, սըրտակըմուր մեկնիլ ի քէն,
 Լզպրտակն երջանկութեան իմոյ առ ոտըս քո եզեալ,
 Չոր ի քնքուշ ձեռանէդ և ի պըթոյդ ևս ընկալայ,
 Չոր պահեցի սըրտիս կրակով, ցօղով աչացս ոտպեցի,
 Եւ արդ թափուր յիւր ի գեղոյն և լուսափթիթ կայ ի թերթիցն.
 Ա՛ռ, քո բնձայն էր այն, աւաղ, տե՛ս իցէ՞ նոյն զոր ինձ հտուրդ...
 Մեկնիմ ի քէն և դու ինձ ո՛չ զանձառ հայեացսդ յուզարկ դիցես,
 Տեսանել թէ՛ յո՞ գընայ այն դալիհանարն և որը պանդուխտ.
 Մեկնիմ ի քէն, և դու ըզդուխարդ շարթելով ազաւնակերպ՝
 Վուվուս ըզհեա իմ չարիցես թէ՛: «Յո՞ գընաս ո՞յ թըշուտտիկ...»

Լուր ինձ, Հրանոյշ, ամպք բարձրագէդ գերթ սեառ ճիւղաղ թեօք
խաւար

Պատեցան ըզլուանիւ, և լըռութիւն աներբրուն՝
 Տեղի տըւեալ մըթութեան, հողապատեան կայանս էր ցուրտ.
 Եւ թօթափեալ ըզհող շիբմիս՝ քեզ ի խընդիւր եկի, Հրանոյշ,
 Ձի ո՛չ մահուն ժանտ երես, ո՛չ գերեղման անդընդափոս
 Կորգել ըզքեզ ինչ կարացին ի սերտպրկաց իմ ոպւոյս.

Խորութիւնք յաւիտենից զիս ոչ ի քէն անջատեցին.
Արև կենացս իմ թըռեաւ, հարեալ անկայ երիտասարդ,
Այլ պիճնդ ըզսէր քո ունէի, այն ընդ իս էր երբ իջուցին
Ձիս յաշխարհ ըստուերաց մոռացութեան և մըռայլից:
Լնւր ինձ, Հրանոյշ... այլ է՞ր նըւադ ձայնիս չբտաս դու
դարձուած.

Ձե՛մ կենդանի, և է՞ր փակես զաչսըդ զիս ոչ տեսանել,
Ձե՛մ կենդանի, և է՞ր ի ըաց խոժոռ ըզդէմսըդ շըրջես.
Եկեալ չե՛մ գիշերազրօս ձեր զըզուանաց դընել կըրճիմն,
Եւ ոչ համայն գօրութեամբ մեռելութեան և դամբանին
Ամբաւութեան իմոյ սիրոյս փոխան ըզսէր քո պանանջել.
Ձոր կենդանեաւ ինձ զըլացար, միթէ մանձեւ տացես շընորհ՞:

Լնւր ինձ, Հրանոյշ, դամ հարցանել թէ երանեալ իցես և գո՞՞,
Բոցտանիւ աշխոյժք և խանդք քեզ ընդ սոխւք փթթի՞ն
դարձեալ.

Ձըւաթթութիւն և խընձիզ զես փայլակէն ի գէմըս քո,
Առաւել վըճիտ շողմն աշխուճըդ զերծք ինձ գիպելոյ՞,
Ըզչորարեկ տերեւիկս յիշատակիս ի քոյին սիրտ
Բաջիկ ի ըաց վարեցիք, զի անարգել և ընդ արձակ
Մուտ տացես նորոգ ըաղձից, գիպեալ յուղւոջդ իմ տապանին,
Անժոյժ ստեղծը ըզնովաւ յայլու՛մ ի ծոց սլանալ ի մուտ.
Դու կենդանիդ մոռացար զայն՝ որ ի մանուն իսկ յաւէտ
Ո՞ Հրանոյշ, յիշէ ըզքիզ... հոգիս սիրովդ է խարակեալ.
Ընդ թևովք անմանութեան իւրոյ պատեաց սէրբն զայն,
Ոչ հանդարտէ մըշտատոջսր անկ ըոցոյն բոնութիւն,
Արագագոյն քան զաստեղս և քան ըզսայլ հրաշէկ զընդին
Ընդ անուորտ տապարէզ տիեզերաց սրարշաւէ,
Եւ ի սրացս իւր առաւել ըոցն այն վառեալ բորբոքի՞:

Այն, Հրանոյշ, յիշե՛մ ըզքիզ, և ընդ ուրուի մօրն իմոյ
Հանապազ ըզքէն խօսիմ, և զայստիկ ասե՛մ նըմա.
«Ներե՛ս ինձ, մայր, թէ որբացեալ ի քէն՝ սակայն և տպրեցայ՞,
Եւ որբ կացեալ ի նմանէ՛ հատաւ արես ի գերեզման.

Ըսքանչեւի էր, մայր, կոյսն այն քան զամենայն սքանչելիս.
Ձոր ինչ երկինք և բընութիւն ունին զարդեր և գեղ և լոյս
Յիւր գէժս 'ւ ի բիրսն էին ամփոփ, յիս ի նոցունց ցոլանային.
Շըրթունքն և վարսք մեղր ունէին վասըն բոլոր սրտիս վերաց,
Թըւէր ինձ, մայր, յանդարձական յինէն ի քում հրաժեշտին
Դու բարեգութ մաղթեցեր զերկինս յըղել յիւր զուարթնոց
Քան զամենայն տարիելին և գըգուելին և մանկագոյնն
Ինձ մօր և քեռ լինել փոխան, փոխան ամէն սփոփանաց.
Սիրոյ հրեշտակ ես կարծեցի, մահուան հրեշտակ էր նա, մայր իմ:

34. ՔՆԱՐ ԵՒ ՇԻՐԻՍ

Որպէս և սիրտ իմ վշրեցաւ, և դժու, Քընար, բեկցիս ջախջախ,
 Շատ իսկ ի յողբս ու ի թախիծ՝ վաստակեցաք ի միտսին.
 Հանգոյն կողերց ուռննեաց թեկքդ արտասուաց լըցան ցօզով.
 Զեղերերդ ցաւոյ միայն պտեալ առ քեզ յարմարագէտ,
 Ողորմ մանուան իմ սիրելեաց գնացեր յաճախ յազարկաւոր,
 Եւ կոծակից լեալ սոխակին, հողմոց ի սոյլ ցրտաշունչ,
 Առ սընարըս նոցին շիրմաց դու ընդ լուսնին ցանդ հակեցեր:
 Յետ անուշիկ ձայնին մօր առ մանկութեանն իմ որբանաւ,
 Որ ըզմանկիկ հողեակն իմ գրգէջ ի ծոց սիրոյն անճաւ,
 Որպէս ազու ազաւնեակ պուռէ ըզձազ իւր նորարոյս,
 Ի հըմայս մայրենի անճուն գրթոյն զիս վարժելով
 Թեաճել անխորձ կենաց ի ծաղկաւէտն ի վրդարան,
 Ա՛հ, է՛ր ոչ այլ ձայն քաղցրութեան ինձ հրաւիրակ չեզև խնդի.
 Է՞ր և դու, Քընարդ իմ, ո՛չ պըսակեցար յոլորս վարդից:
 Յակումը պարու գեղեցկահոյլ ուր պուարթութիւն խոյտայ ի
թինդ
 Եւ հոյզ ծաղկանց փրփրագէզ մատուրակէ քաղցր օշարակ.
 Դու ոչ ընկեր հաճիս լինել այն հրճուանաց անապակին,
 Ոչ երգարան մնչես յորդոր օրիորդաց ի պըսակին,
 Որք ի խորան մատչին սիրոյ կապտեալ ըզթերթըս վարդենեաց.
 Զայն խորհիցիս թէ գերզ ծաղկունս են վաղանցուկք հարսունք
սիրոյ:
 Ի խրախճանս իսկ մըտերմաց և ի կայտիւ փափկիկ ոտից,
 Ընդ որպիսնում դու սեաւ ողբոյ լինիս արդեօք պաղտ խօսակից.
 Զի յանկարձ նըսեմաստուեր թըւիս փոխեալ յանտառ նոճեաց,
 Հեռի ի ծաղկոցաց ուր կոյսք ճեմին՝ ւ անբիծ տատրակք,
 Հեռի յամենայնէ որ շնչեն սուզ երանութեան,

Եւ մօտ միայն ուր լուս ի լուս հեծէ կեղերջ մահաշըշուկ:
Ի սառնասոյց վերայ լերանց 'ւ ի ծաղկածիր դաշտըս Հայոց
Քանիցս անժոյժ թուցեալ թեօք՝ գորովադէտ դու գուսան,
Երգս հայրենիս փորձեցեր. քեզ ըզդարձուած հառն աւերք,
Եւ շիրիմք նոճեպարտիակ տիրաննչակ կրկնեցին վանդ:—

Քընար, քո մի անգամ եեթ դադարեցին արտասուաց շիթք,
Եւ կոյս մատամբ Յոյս ըզարլուսը պատառէր քօղ ըզճակատուդ,
Մինչ Սէր ոսկի իւր թեօք պարայածիկ եկեալ ըզքե
Շարժէր ըզլարսդ յաղերախ յերգս ի մրմունջ սրտահաճոյ
Աս մեղուշն նազենիկ առ աչազեղըն կոյս քնքոյշ՝
Յայնժամ գիւրդ ի ծոցոյդ ծաւակեցան դաշնակութիւնք
Մշտանոտան իբր յազրերէ յիմ սիրտ ցամաք և ծարաւուտ:
Ձի գեղեցիկ կոյսն էր ամբիժ և փարելի հողուոյս իմոյ:
Այլ աւաղ ի բարձրադէտ ի դարեանդ եղեմական
Տնկեալ էր նա վարդ անմահից, գութ կաթողին հրեշտակաց
Խնամածուք նըմին ի լոյս ի ցօղ աստեղց սընանելում:
Իմ յոյժ նրբին էին թեւ և բիւր տենչանք վառեալ ի ծոց.
Ուստի դայս առ ստորեաւ սղեմ ուղերձ սիրտաարփիկ.
«Ձի խանդակաթ հս, օրիսրդ, դուստրըդ սիրոյ և փափկութեան,
Ձի տարփալի իցեն երկինք 'ւ աստղունք թէ քո պէս ծիծաղին,
Եւ հրեշտակք արքայութեան թէ քո նըման իցեն փափկիէք.
Մհ, եկ թըսիր առ իս, Քնյր իմ, և յանապատ սրտի իմոյ
Դու փթթեսցիս անուշարոյր, և զերդ պիւլլիւլ գիւրազորով
Մնդ մընչեսցէ սէր քոյին երջանկութեան ընծայաբեր.
Եւ թէ ի քոյդ ի փափկալուսը առ իս ի ձայն բարեբաստիկ
Ողենորոգ դարթնու հողիս 'ւ առոյգ տիոցս իմ դալար,
Նըւրբեցից քեզ ըզճաղիկս երիտասարդ իմոյ կենաց.
Վասըն քո իմոյ քնարիս զըւարթասցին լարք տիրական
Ըզքոյդ միայն ցանկալի մրմունջելով անուէն չքնադ:
Եկ, սպիտակ իմ նագելիս, յորմէ հետէ տեսի ըզքեդ,
Երանութիւն լուսածղի բազկօք զինե փարեցաւ,
Յոյժ սոտակ լուսապայծառ զդեցաւ հանդերձ բնութիւնն անհուն,
Առաւել քաղցր հնչեցին տիեզերաց դաշնակութիւնք,
Եւ ոսկեթոյր մանկութեան աւուրք կենաց գեղածաղիկ,

Հիւսիսալք ընդ վարդս ի մի փունջ առաջնորդեալք ի յուսոյ,
Ինձ յանդիման եկեալ ըզնէք անձն իմ լրջին անուշութեամբ.
Ե՛կ, քոյր իմ, թէև ընդ հուպ ակնարկեսցէ ինձ մահ խոփու,
Ի մի համբոյր և ի նայեացդ կեցից ևս դարս բերստպատիկ:

Յարեաւ Քընարս ի գեղգեղել, այլ ոչ ևս էր նազելին այն.
Մանականցու այն հրեշտակ, թէպէտ անթև, այլ շոյտ փախեաւ.
Եւ ո՛ր արդեօք ծածկեցար դու... լեղի է յոյժ յետինն ողջոյն,
Որ անճաշակ ի քաղցրութեան գընա յետին համբուրի:
Տրամագգեցիկ իմ Քընար, ե՛կ ընդ իս, այլ ոչ խարեացիս.
Ասուել հաճոյ և անկ՝ գիտեմ՝ իցեն քեզ եզերերդք:

Ի խորշ ուրիք Վասիորունի բլուր մի կայ ապառաժուտ
Որ զինքն ի ծովըն նայի ծիծաղ ծուռալ առ իւր ստիւք.
Ոչ առ նովաւ ոսկեհունձ ծածանին մարգք և արտորայք,
Ոչ վարսագեղ ծառոց շարք, ոչ արծաթի ջուրց խոխոջանք.
Հոգմն որ անդէն փըչէ ըղթեա թացեալ յալիս Ելեապոնտեայ,
Տխրագին թափառի զի չէք ծաղիկ առ ի գգուել.
Ո՛չ անդ շքեզ գաստակերաք, ոչ հանգըրուանք անդէորդաց,
Այլ ի գագաթըն մի ծառ և մի բնակիչ կայ ընդ ծառով,
Մի բնակիչ անդ ընդ ծառով, և այն ծածկեալ է ի հոգ
Եւ այն եղբայր իմ է, աւագ, բարձեալ յինէն վաղամեռիկ:
Եզբայր իմ, դու ընդ այս ծառովս ակործէիր բազմիլ ըստէպ,
Որ զհովանին շնորհէր քեզ. ըզփուտ տերեւ իւր արզ ախտէ
Ի վերայ շիրմիդ՝ ուր ևս բազմիմ տըխուր և մըտասիտն.
Նախանձեցայ քում հանգստեանդ, ընկնլ և զիս, ո՛ն, ոչ թողից
Վարստական տերեոց լինել միակ ընկեր շիրմիդ...
Այլ այս ուստի յանկարծ հնչեն երգք ի ժամուն խաղաղական.
Զինջ ի նըշոյլ լուսնակին որ ծիծաղի յերևոյս ջուրց
Բազմանոյլ գիտեմ ամբոխ երկայնաձիղ առ ծովափամբ,
Ճեմ ըզճեմի և զուարթստաա խայտան ի գիրկ ըզրօսանաց.
Աստեղք, կաճառք լուսանոս որ ի կամար ցոլան երկնից,
Թըլին ըզխինդ և զբերկրանս տեղալ յերկիր ընդ շող իւրեանց
Ի զեփեռին մեզմիկ շունչ և ի գեղգեղ երածշաաց
Մանարկեալ գընան մարդիկ երջանկութեան յալիս վըճիտ.
Աստ ուր կամս՝ շիրիմ մահու, և անդ հաճոյք բերկրապատար.
Ա՛յ յըչափ մօտ իրերաց սուդ, տրամութիւն և հեշտ վայելք...

Այլ գիշերըն տխրամած ահա պատէ տակաւ զերկիր
Զերդ սեաղէմ թշուառութիւն զոսկեղինիկ աւուրց ըզդէմս.
Լռեցին նըւազք և ամենայն ընկաւ ի խորըս մըթութեան:

Այլ դու կայ մընա՛, լուսին. մի՛ զմտերիմդ թողուցուս զուրկ,
Մի՛ և զայս վէմ ցրտահար. ո՛հ, սիրեցի ես ըզլոյս քո
Ի մատաղ տիոց խմոց, զի դալիահար ես իբրև զիս.
Իբր յիմ ճակատ և ի քոյզ մեղամաղձիկ բնակին խորհուրդք.
Սիրեցի ըզիսայլ հեղիկ որպես զայտից իմ նազենկան,
Եւ զճառագայթըս քոյին իբր ոսկեթել զիւր խոպոպիս.
Տե՛ս փշրեմ աստ զիմ Բընար. լուսին՝ մաղթեմ յետին հայցուած,
Մի՛ զուրկ թողուս ըզմըտերմիդ ըզցուրտ դամբան մենաւոր:

35. ԵՐԳ ՄԵՐՁ Ի ՄԱՀՈՒՆ ԵՂԵՐԵՐԳԵԱԼ

Հեծեա՛ց զերդ սօսափիւն գիշերական պաղեալ հողմոց,
 Տնւր ձայնիս ծաւալանալ հանգոյն ջայլից դուժաւորաց,
 Ի գիրկս իմ ե՛կ և մըմընջեա՛ հուսկ մըմունջ՝ չեւ փըշրեալ ըզքեղ
 Եւ ըզքեկորըս քո արկեալ կոխան ոտից անցաւորաց:

Աբշալոյս ծիծղուն կենաց ի մէզ մըռայլ կա խորասոյզ,
 Ապագայն իմ ըսքօղեալ ընդ թուխ ամպովք փայլակնացայտ,
 Եւ ներկայս որ ի ձեռին քսմնեալ ի փուշ և ի դժնիկ,
 Ո՛ր Քընար, և սիրտ իմ խոնջ է ընդ բեռամբք յիշատակաց:
 Ի նախընծայ լարըն քոյին մինչ կայտուէին մատունք զըւարձ,
 Պարք հաւուց խայտանրկար զիս ունէին ընկեր նուագաց,
 Մուսայն իմ լոգանայր ի ճախրահոս բնութեան աղբիւր,
 Ինձ մեղր անտի մատուցանէր և ծաղկահոտ անուշութիւնս:
 Մի եւեթ օր անամպ փայլեցաւ այն երջանկութիւն,

Եւ երկրորդն առաւօտ չունէր ընոյն գեղ դիտակի:
 Յանձնիւր աւուրն ի ծոցոյ ծընեալ խաւար բարկ փոթորիկ,
 Մէն մի ծաղիկ ի փընջոյս կապտէր, սոբրայր յանհետ փախուստ:
 Արդ առաջի իմ ոտակադէմ արձանացաւ Թշուառութիւն,
 Ուղեւորն հէք, ի տեօիլ արիւնըուշտ հուղկահարին՝
 Ըզքեուն ի բաց դընէ զուժպէտ, մի սուսերին լիցի խափան.
 Ի բաց ըզքնարն ես արկանեմ ի տես խոժոռ ախոյնին:
 Հեծեա՛ց զերդ սօսափիւն գիշերական պաղեալ հողմոց,
 Տնւր ձայնիս ծաւալանալ հանգոյն ջայլից դուժաւորաց,
 Ի գիրկս իմ ե՛կ և մըմընջեա՛ հուսկ մըմունջ՝ չեւ փըշրեալ ըզքեղ-

Եւ ըզրեկորըս քո արկեալ կոխան ոտից անցաւորաց:
Ձի հանգոյն շողից յուսնի գորովք փարել ըզձայ մանուկ,
Սրտահեշտ ձօնիք կենաց թօթափեցան յիմոց ձեռաց,
Ոյք գաշխոյժս իմ տածէին բոցանըշոյլ շիջան հըրատք,
Հաս սեռւ գիշեր՝ յոր ըսպիտակ ուզիս հանդէպ տարածանի:
Ընթացա՛յց մենաւոր ըզձանատարն ամայութեան.
Ոչ եւս յԱզենն իմ գարձուցից ըզրիրս որ այլ չունին արտօսը.
Եւ զի՛նչ պէտք նըւագաւոր երգոց անդարձ արտորելոյն.
Փշրեա՛ց, Քընա՛ր, ես լըռ ցաւեր խնդրեմ եւ լըռ գերեզման:

36. ՄԵՐՁ Ի ՄԱՀ ԳՐՈՒԱԾ

Կարծեցի մոռանալ, ոչ գիտացի չափել ըստոյզ
 Զանդուկ խորայատակ սրտիս որ լին էր երազօք:
 Մէ, յիշատակք, ոյք հանգոյն անեղամուռնչ մըրըկոտ ալեաց
 Խուժեն անդուլ յիմ վերայ. ի վեր ի վեր տանիմ ըզցուս
 Եւ համարիմ թեթեանալ, խոր ևս ի վիճ թաւալի նա:
 Լնդ վայր բուռն ահուր արոփմանց առնեմ սրտիս
եռանդնազայր,

Լնդ վայր ի հող և ի վէմ անկանի գլուխըս մայրամած,
 Ոչ գաղարին խոյանք սրտիս, ոչ հովանայ հուր ճակատուս:
 Այս ընդ անձին գուպարած գրգռէ ըզցուս որ գիս լափէ.
 Ա՛հ, զի՛նչ առնել է ինձ, ո՛ Տէր. յոյս իմ և ջան իմօց կենաց
 Ի մի կեթ փայլէր նայեաց և այն յինէն ծածկեցաւ արդ.
 Թուխ աչկուռք նորա ըզծիր կենացս յոսկի ներկանէին.
 Բզնա ի գանձըս երկնից ընտրեցի ես դամեհնագեղն:
 Էր նա շունչ իմ շըրթներոյս, հողի էր նա ոգւոյ իմոյ,
 Նա իմ խորհուրդն էր անճառ յաւերժակայ և բարձրագան:
 Զըզոյր ուստեք ինձ երկիւղ, զօգ ա՛յնքան չքնաղ՝ ւ անոյշ:
 Մահուան շիմաց խակ ընծայէր ո՛հ չըգիտեմ սրպիտի գեղ,
 Եւ թըւէր ինձ մահ կին մի խորհրդաւոր քօղածածուկ
 Որ գալոց էր յաւուր միում ժըմիտս ածեալ շըրթանց իւրոց
 Շիջուցանել ըզսէրն իմ յետ զգերանըշոյլ տալոյն ըզփառ,
 Կամ զիւր փըչէր շունչ ցըրտիկ՝ ւ անկանէին ալազուռեալ
 Երկու յերար կից վարդենիք ըզքաղցրագոյնն արձակեալ ը՞յլ:
 Աղբ ցընսրք իմ սըրտիս, մհ յիմ գնացէք անհետացայք:
 Արդ ելիք եթող նա զիս, հուր արատաւը ևն իմ բաժին:
 Պատեցայ ի ծալըս սեաւ դառնահամբույր թըշուտուրթեան.
 Զի՛նչ առնել է ինձ, ո՛ Տէր, և ո՛ երբէք հաւատայր
 Զի հրեշտակն որ յիւր ձայնիկ փոքր ինչ յառաջ գըթածարար

Ձիւ յափանց գերեզմանին անդրէն ի կեանս վերակոչեաց,
եղիւ ինքըն արդ անգութ ձեռամբ անդանօր դահալիթէ:

Այսօրէս անձն իմ ընկճեցաւ ընդ բեռամբ մի կեթ մտածման,
Սիրանեփայլ ոլորտ կենացս անա ի գոյն հարաւ դայկան.
Շատ իսկ տեսի, շատ իսկ կրեցի, յոյս, երթ, փախիթ, չկամիմ
ըզքեզ:

Մի ըզհանգիստն իմ խրոտիէք, ո՞վ ձայնք սիրոյ և բերկրանաց.
Ողջամբ մնացէք, սակինկ անուրջք, լուսատեսիկ երևոյթք,
Որ այնքան բոյր և այնքան զարգս ամիք աւուրց իմ զեղաշուք
Սիրուն մոլորութիւնք, մեղըր անոյշ և մահածու:

Աչքեցուծիւն, որոյ զբիւռն աղիտարեր է սրտի,
Գուք ոչ ևս էք, մհ ոչ ևս էք, փախեան երազք քերթողականք.
Ողջամբ քնացէք, սրփոտեալ յուղուշ ըզբիւր պատրանս և յոյս
դամէն:

Գիմեմ յուշիկ ի դերեզման, այն հանգստոց զիս ոչ իտքէ.
Առ սիրելօքըս վաղատեալ, անդ ի տեղի ինձ տոանձնակ
Հանգիաց և ես գո՞՞ւ անարտում, գէթ անդանօր չեմ անսփիկ

Սյն, վայրն է առանձին և անլեհեր իջանեմ անգ.
Եւ երբ հողմըն մեռելոց դայցէ զածիւնն իմ խըլքտեալ,
Ըսգիտակն իմ ճակատ ձրմեռնական մրբրկաց ի մոռնոյ
Ի բաց զպատանան սրացէ, և բազմելով շիրմիս վերայ՝
Քե՛կ, զոչեցից առ նա, ե՛կ, չեմ նոյն յորմէ խորշէիք դու.
Տե՛ս զիսրդ դ՛ղեցկացոյց զիս մահ, արար զիս տարփելի.
Միթե դարձեալ ատիցեն զիս և անդրագոյն քան ըզշիրիմ...

— մ՛՛վ բանգազուշանք, նա ոչ լրսէ, ոչինչ յիշէ:
Ի հանգիտան իմ հողոյ մըտից անդրէն ընկողմանեալ
Եւ ի խոխոջ վըտակին ի յուշ ամից գխազազութիւն
Իմ հեղաշարժ օրօրոցիս, և զարեզակըն մանկութեանս
Որ ի զաշտիկն իմ ցոյալ, զանոյշ իմ խաղս և զարշաւանս
Ընդ հովանեաւ ծառաստանին որ զիւր տերեւ թափէր յիմ զլուխ
Եւ ուր սոխակըն թազուցեալ երգէր առ իս զիւր երգ դորով.
Ո՛հ մերթ հոգիս ըզմայլեալ դայցէ վայրացն այն այցելու,
Գացէ ըզմարգ, գացէ ըզպուրակ և զերգցիկըն թըռչնիկ,
Եւ զքեզ, քաղցրե՛կ բարեկամ, որ զիս միայնդ յիշես և լաս:

37. Ի ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Ե Ր Գ

Ի ըժօխք ի մարտ արշաւն
Գոռ բանակաւ սեազունդ,
Արիք ընդդէմ քաջազէն
Վառեալք յասպար ի մըլիունդ,
Թորգոմեան զիւցազննք,
Նահատակք աննըկունք:

Ահա արին յարեաւ Վարդան
Դըւոյթ ի դաշտ սալ փառաց,
Գուպարոյաղթ քաջացն ի կռիւ
Որտաւընդոստ ձայն դոռաց.

Վառեցարնք յասպարէզ՝
Հուր ըզգեցեալ բոցակէզ,
Թորգոմեան զիւցազննք,
Նահատակք աննըկունք:

Յարեաւ Աստուած ի յաթոռոյն՝
Ճշմարտութեան ախոյհան,
Եւ լուսաթուիչ հաւատքըն սուրբ
Ճախրեաց զեհին յանդիման:

Վառեցարնք յասպարէզ՝
Հուր ըզգեցեալ բոցակէզ,
Թորգոմեան զիւցազննք,
Նահատակք աննըկունք:

Ահա ըզսուրն շարժեաց Վարդան,
Եւ սեաւ անդունդք սարսեցին՝
Ահա արին անկաւ Վարդան,
Երկինք ի խինդ պարեցին՝
Վառեցարսւք յասպարէզ՝
Հուր ըզգեցեալ բոցակէզ,
Թորգոմեան դիւցազունք,
Նահատակք աննկունք:

38. ԲԵՐԹՈՂԱԿԱՆ ՈՒԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒ Ի ՔՈՒՆ
 Ե Ր Գ

Ապողոնի որդիք, նընջես ընդ ուսննեացն հովանեաւ,
 Պըտակաւորք ի հիւս դափնեաց նորա յաւե՛ժ անթառամ.
 Քեզ ըզպաշտօն հարկանեն անժան Մուսայքն անուշիկք,
 Եւ ի մեղմիկ մընչէ, աւանդ, կացեալ քընարդ առ ընթեր:
 Գեղածաւալ որպէս սղբիւք զեղեալ ի սուրբ ականէ,
 Այնպէս խանդից ի ծոցոյդ ցայտեն ծորանք քաղցրաբուխ,
 Դաշնակութիւնք ի լեզունէդ կաթեն առաւ մեղրածոր,
 Եւ դու նընջես ընդ վարսագիդ ընդ ուսննեացն հովանեաւ,
 Ապողոնեան ի հիւս դափնեաց պըտակաւորք ի ճակատ.
 Օ՛ն արի՛, ե՛լ ի հանդէս, աշխարհալուր հար ըզփողդ,
 Հընչեցօ ի լուր հայկեան գուպարայաղթ դիւցազանց
 Քընեկոց յանդընդային ի վայր մահուն աղջամուղջ,
 Եւ կանգնեացին միանգամայն խոր ի շիրմացն յարուցեալք,
 Քեզ ժըպլտ հըրճուանաց հանեալ ի դէմս վեհափառ՝
 Ճախրեացեն լուսաթոխչ վեհից յաւերժն ի կայան,
 Անմահութեան ըմպել ի քէն մատուցեալն ըզբաժակ:

39. ԴԻԻՑԱԶՈՒՆՔ ՀԱՅՈՑ

Փամ էր պարսպոյ խաղաղական և յանկուցիչ
 երկիր է քոյ սևաթոյր ըզլըռութեամբ փարեալ անոյշ
 ևոր է քուն թանձրութեան հանգչէր համայն վաստակարեկ,
 Իբրև հսկայ թըխատեակ յանդընդափոս վաղեալ յայլէն՝
 Սևադէմ սասեաւ գիշեր ծաղաց ի ծագս տիեղերաց,
 Լըռէր բնութիւն առ հեշտեաւ լըսել ըզսոյլ հովուին սրընգի,
 Էզնուրբ շըշուռնչ շըրթանց սիրոյ, զերջ մօր յորբանն ի
քաղցրաձօինչ,

Ըզկարեկէր սըբտից հառաչ և դաղօթիկեր մըմուռնջ ձերոյն,
 Ի փարախս օթադայեալ մակաղէին հօտք և անդհայք,
 Եւ օղականք սաղարթախիտ առեալ ի յստըն դադար
 Փունջք խուռնեքամ վարդից ծաղկանց, մարդարտաշար լըցեալ
շաղով

Ի սիւզ հեղիկ ծածանէին, և խունկ անոյշ ծաւալանայր,
 Հնչէր անդուստ փափուկ՝ նըսեմաստուեր՝ և ի թաւ մայրեաց
 Գիշերախօս երգեցկին նըւաղաւորըն դայլայլիկ,
 Եւ միայնակ՝ լըռութեան ծամուռն կացեալ ընդ մեր թարգման,
 Ըզմըրմուռնչն օրնեբրգութեանց՝ երկրի յերկին վերառաքէր,
 Եւ երկինք ջահազդեստեալ շոյայր վըսեմ և վառ ի վառ,
 Լըսին, ամպիգէն քոյ լուսամփիւս արկեալ դիրսի,
 Եւոգէր ի պարս սասեղաց շուրջ ըզնովաւ աղը՛րբահոյք:
 Ո՛հ, եւ ի յայս բուրազուարթ և հովասուն ի զարեանդ,
 Ուստ ի ծործոր խաղայ վըտակ սահուն ալեօքըն կարկաջոտ,
 Ուր ի համըոյր զըոյլըս ծաղկանց գգուէ զեփիւս փաղաքշելով,
 Խորըրգաղզած առեալ ըզնխատ, տէր ամայլ կացեալ երկրիս,
 Միտք իմ բնդ քեզ ձեմեմ, լուսնեակ, ի հրաշադարդ գաշտըս
երկնից,
 Եւ ի ձեզ՝ սասգունք փայլունք, ի ձեզ յակճիւս աղընկատոյց,

Կապուտափայլն ընդ կամար յառեալ պշնում հոգեզրեարձ.
Այլ դուք մարմինք իցէք արդեօք, եթէ զուարթնոց պարք
լուսեղէն,

Լուսատուք տրեզերաց միթէ լապտերք մշտաբարբոք,
Առկախեալք ի գահլիճս Աստուածութեան օթարանաց,
Քէ բոցեղէն հովանոցք ուր մէն մի զահք են Անմահին:
Մինչ ի գիշեր զովագին, աստղունք, աստղունք դեղեցկաշարք,
Նըշոյլք ի ձէնջ վայրաբերին կաթիւք ի շաղ ցողատարափ
Ի ձե՛զ դանմահական երկրի ծընունդս ես նրկատեմ:

Ո՛վ դու չըբախտաւայր երկիր, երկիր Թորգոմական,
Կառճ ի վեր զաշքս քո, ան՝ս ըզդիւցազանց որդեօցդ ըզհոյս.
Եւ այնք աստեղք երկնապարիկք եթերականն ի կամար,
Եւ այնք յաւէժ ի նըշոյլ փայլեն շողշող ոսկեծղի.
Ահա ներսէս, Սահակ, Մեսրոպ, Տըրգատ, Վարդան, Ղևոնդ,
Մըմբատ...

Այլ ձեր այժմիկ սըրավարեալ, ասա՛, երկիր իմ հայրենի,
Ո՞ւր բախտդ և փառք ամենապանծք անցին ՚ւ ի սպառ
անհետացան:

Արդ մերկացեալ ցըրտասարսուռ աւերակաց բնակեալ ի մէջ,
Վայրասլար անցաւորաց զողզոջ ըզձեռսդդ տատանես,
Ռբայէս այր մեծափարթամ ի մարդադաւ ճանապարհի
Աւաղակաց մատնեալ ի ձեռս, պիրճ ի զարդուցըն կողոպուտ,
Մահացու հարեալ վիրօք արիւնազանդ կայ ի փոշոջ,
Հծծիւն նըւաղ աղեգորով միայն ողորմ հընչեցուցեալ.
Ա՛յս է ազգին զիւցազանց յետին փառացըն արձագանք...

Ի՞նչ, Ռզիդ հոլաթեան, դէտ հինաւորց փամանակաց,
Չայս մի նըւազ մաղթեմ՝ պարզեմ ի վեր ըզմութըն վարագոյր.
Իդձ ի սըբտիս կարօտակէզ անկաւ տեսոյն իմ հայրենեաց.
Ըզնախնին նորա տեսից ըզկերտարանըս վեհափառ:
Բացաւ, ո՛հ... վերացաւ... լըցան սըբտիս տենչ և անձուկք.
Ո՛վ անցելոյն անեզահարաշ տեսիլ ծաւալ իշխանութեան.
Անպարագիծ ովկիան, յար ալեւանջ ՚ւ անդնդախոր.
Յորձնեաւանդըն պրտոյտքեալ սուբայ վաղիւք արշաւասոյր՝
Ի վի՛ր ինչ անյատակ յանդ կարկաջ շառաչելով.
Դարք վաթսուս կոհակաւէտ ի յուս նորա զընան թաւալ.
Ամօղրոպաձայն փոթորիկ կայծակնացայտ հոլաթեօք,

Մըդէ անդոււլ ըզնոսա յուզի անդարձ ճեպեցուցեալ,
Միթէ շուենչ անմահական իցէ արդեօք նա բարձրելոյն,
Անդ վեհալայր շէնք և քաղաքք, հըզօր և պերճ արքայութիւնք
Մի բզմիով թաւազլոր հարեալք փըշրին կուռ շըշըրդմամբք,
Եւ այն գոչիւն կականաւոր յանդնգային ելեալ վընէն
Մըռընչիւնք են սոսկալի աղգաց յախուռըն վարելոց,
Ահա և իմ հայրենիք և զիւցազունք գուպարայաղթ,
Ահա՛ գոռոզքն և ահազին Տիգրանակերտ, Վաղարշապատ,
Ահա՛ հըսկայքըն Հայկազունք՝ Հայկ և Արամ, Տիգրան, Վահագն,
Ահա և քաջք Պարթևազունք՝ Արշակ, Խոսրով, գոռն Արտաշէս
Երազաթախիչ ալեացն ի թևս և նոքին սի վարեալ յապշոպ
Մլանան շոյտ և նըվաղեալ լինին յաշացս աներևոյթ,
Ո՛ւր փախչիք, ո՛վ դուք պարծանք և փառք յաւէժ

Հայաստանեայց,


Ո՛ւր ըզնէք հայրենիս թողուք այսպէս վատաբախտիկ:
Ամենակալ Տէր, աստուածաւան այլ իմըն շուենչ յըղեա՛ մաղթեմ.
Յետս ընդ կրունկըն զիմեսցէ յափըշաակիչ այս ուլկիան,
Մըվառեալ յերկիր զիմ զիւցազունս, ըզգաստակերտսըն հոյակապ,
Ըզփառսըն հայրենի նորոզ այսրէն դարձուցանել:
Ընդունա՛յն աղերս, և իմ ամբօխեալ միտք բանգազուշեն.
Ի ձեզ, աստղունք, աստղունք հայոց, վերամբառնամ զաչս իմ
անդրէն՝

Չայտոսիկ ողորաւոր հեղլով մաղթանս կողկողագին.
Չա՛հք մըշտավառք՝ լուսատու լերուք երկրին ձեր պանծալի,
Փայլեսցէ անաղօս ընդ ձեր լուսոյ և փառք նորին.
Բոցաախպ նըշոյլ և շաղ հեղէ՛ք աստէն քաղցրածաւար,
Մի յանլոյս ի զիշեր ծածկեալ երբէք խարխափեսցի.
Տեղացէ՛ք հուր ի յերկնից սիրաբորբոք վառարանէն.
Յաբիցե՛ն ժառանգաւորք ի ջերմ մոխրոց հին զիւցազանց
Նոր կենդանութիւն շնորհել Ազգիս և Հայրենեաց:

40. ԳԻՇԵՐ


Ոսողողական ժամ պարապոյ էր անդոյր,
 Եւ տիեզերք պատեալ ի քօղ սեւթոյր.
 Բնութիւնն համայն անկեալ ի խոր ի թըմբեր,
 Վաստակարիկ հանգչէր ի քուն և երկիր.
 Համատարած սեպղէմ մութն անաւոր
 Բազմէր իշխան յաղջամղջին իւր աթոռ,
 Եւնայր ընդ լոյս և ընդ արփին լուսավառ,
 Կամէր զ'ի սպառ լիցի երկիր իւր անար.
 Մակաղէին խաշինք յարօտն ի դալար,
 Եւ օղականք առեալ ի յոտքս դաղար.
 Լըքեալ լերինք, լըքեալ և դաշտք ամայի,
 Միայնութիւն միայն բնակէր ի յերկրի.
 Փունջք խուռներամ ծաղկանց վարդից կոտորակ,
 Մարգարտաշար լցեալ շաղով կենսունակ,
 Ի սիւք հեղիկ ծածանէին վէտ ի վէտ,
 Բուրումն անոյշ ծաւալանայր խընկաւէտ.
 Գիշերախօս անպուտ և այն երգեցիկ
 Եղանակէր գեղգեղ ի յիւր զայլայլիկ,
 Եւ միայնակ արարածոց յանգիման
 Ի լուսեան ժամու կացեալ մեզ թարգման,
 Օրհնարանեալ Հաստչին ըզվե՛ն սքանչելիս,
 Յերկինս նըմա վերառաքէր զըրուատիս.
 Ո՛վ նազելի թըռչնիկ, ճարտար երաժիշտ,
 Գոյդ երգ սիրոյ դիւրիչ ոգւոյ բազմավիշտ,
 Ո՛վ ամօքիչ սըրտից, դեփիւռ ըզձական,
 Մինչդեռ գերկիր պատեալ է քօղ տիրական,
 Եւ բընութիւն համայն սքօղեալ ի մըթար,
 Ո՛հ, դուք միայն, դուք աշխարհիս մըլխիթար,
 Մակայն երկին շողայր վրսեմ վառ ի վառ,
 Քահաղգեստայլ եթերածեմն էր կամար.

Արժաթափայլ զըշխոյն ի գահ բոցակէզ
Ճեմէր դաշտին լայնածաւալ յասպարէզ,
Անդ պողպատն հոյլք գընդից շուրջ պարուօր,
Քոլօրելով ահումբ ի կարգ գեղաւոր,
Ոսկեճաճանչ ակնապարար ի զարդու
Պատուասիրեն զնա շրքեղ ի սպասու.
Ո՛հ, երկնաճեմ աստղունք ի փայլ լուսազգեաց,
Իռք ճառագա՛յթք աստուածային վեհ փառաց,
Մինչդեռ ի խոր նընջեն ի քուն տիեզերք:
Լուռ են երկինք, երկիր և ծով և այերք,
Իռք ի գովեստ անցեալ վեհին ի հանդէս,
Կապուտագեղ ընդ սըրբաշաւն ասպարէղ,
Մըշտամբումունջ երկնից քընա՛րք բազմաղեայ,
Երգաբանէք զարքայն յաւէժ Ուխտալեայ,
Ո՛հ, ես ի թաւ յայտ գարեհանդ հովասուն,
Ուր ի ծործոշտ խաղայ վըտակ կարկաջուն,
Ուր ի համբոյր ըզձաղկանց բոլրս քընքուշ
Շուրջ թեմեալ զըզուէ զեփիւս փազաբուշ,
Խորհրդազանց առեալ ըզնխտ իմ աստէն,
Տէք ամայի կացեալ երկրիս համօրէն,
Ի ձե՛զ, պատգո՛ւնք, ի ձեղ յառեալ զաչս ի վեր,
Ի հողեզուարճ թըմբիր պըշնում ընդ եթեր.
Այլ զուք մարմինք արդեօք իցէք օգապարք,
Եթէ զուարթնոց լուսեղինաց հուրից պարք.
Աստղո՛ւնք, աստղո՛ւնք, մինչ ի դիշեր գովագին
Նըշոյլք ի ձէնջ կաթեն ի շող ցօղագին,
Յարշաւասոյր լուսաշաւիղ ձեր ի ճեմ,
Ի ձեղ զանմահ ծընունդս երկրի նըկատեմ.
Ո՛վ իմ Հայոց չըքնաղ երկիր գրախտաւայր,
Տես զի որդւոցը գիւցազանց վեհից պար
Երկնապարիկ յեթերս՝ աստեղք բազմահոյլ,
Ոսկեծըղի փայլեն յաւէժ .ի նըշոյր



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՌԱՐԱՆ



Մկրտիչ Պեշիկթաշլյանի երկերն առանձին ժողովածուներով լույս են տեսել նրա մահից հետո միայն.— «Մատենագրությունը» Պոլիս, 1870 *), «Տաղեր», Քիֆլիս, 1903, «Բերթլյածններն ու ճառերը», Պարիզ, 1904, «Տաղք և Բարբերությունը», Նյու-Յորկ, 1917:

Բանաստեղծի ձեռագրերը չեն պահպանվել, ուստի ներկա հաշվառիչ ժողովածուն պատրաստելիս, հիմք ենք ընդունել նախ և առաջ նրա կենդանության ժամանակ զանազան պարբերականներում ու երգարաններում տպագրված տաղերը և այլու նեոմահու հրատարակությունները: Նկատի ենք առնել նաև ՀՄՄԻ Պետական Ձեռագրատան № 7690 տետրում եղած տասներկու տաղը, որ ամենայն հավանականությամբ, ընդօրինակված են քաջաստեղծի ձեռագրերից: Տետրը գրված է 1850-ական թվականներին: Մաքրատյան վարժարանի սաներից մեկի ձեռքով:

Անհրաժեշտ ավյալներն քաղակալության պատճառով, ի վիճակի չենք եղել տաղերի դասակարգումը ժամանակագրական կարգով կատարելու, բացի այդ, ներկա հրատարակության բնույթը նկատի առնելով, նպատակահարմար ենք գտել դեռևս նախ աշխարհարար և այս գրարար տաղերը, չնայած վերջինները, գերադասյապես, գրված են բանաստեղծի ստեղծագործության առաջին շրջանում:

Աշխատել ենք, որքան հնարավոր էր, պարզել տաղերի գրության շարժառիթները, առաջին տպագրության տարեթիվերը և այնու Այն տաղերը որոնց առաջին տպագրության ժամանակն ու տեղը (մահույլը) չի մատնանշված, նշանակում է, զրանք առաջին անգամ հրատարակվել են Պոլսի 1870 թվի ժողովածուի մեջ:

Կեանքագրության խնդրում հետևել ենք Պեշիկթաշլյանի տաղերի 1904 թ. Պարիզի, համեմատաբար խնամքով կատարված հրատարակությանը, աշխարհարար տաղերի նկատմամբ երբեմն շեղվել ենք՝ ելնելով ժամանակակից հայերենի լեզվական կանոններից:

Քյուրթիմացություններից խուսափելու համար, աշխարհարար տաղերում պատահույց գրարարով խոնարհած և հոլոված բառերից մի քանիսի ուղղագրությունը թողել ենք նույնությամբ՝ նյդպիսիք տալով օղագիր:

* Մկ. Պեշիկթաշլյանի երկերի առաջին ժողովածուն խմբագրել է քաջաստեղծի համախոհն ու գործակիցը՝ նշանավոր պատմավիպագիր Մեհենցըր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ներայե եմ մե».—Առաջին անգամ տպագրվել է 1863 թվին Տիգրան Չուհաճյանի և Գարրիկ Երանյանի խմբադրուձյամբ հրատարակվող «Քնար հայկական» երաժշտական վեցամսյա հանդեսում (հունիսի 31, № 3) ձայնագրված իտալացի երաժշտագետ Ֆոսքինիի կողմից, Հետագայում երաժշտագետ Հարություն Սինանյանը նույն երգը հարմարեցրել է գաշնամուրի և ջութակի («Հայ ժողովրդական երգեր», № 2, օր. 53):

2. «Բարուն».—Բանաստեղծի կենդանության ժամանակ տպագրվել է մի բանի անգամ, որոնցից մեր ձեռքի տակ ենք ունեցել միայն երկուսը.— «Նոր երգարան, ժողովածու գործածական երգերի» Տիֆլիս, 1864, էջ 139—140, և «Նոր երգարան կամ Քնար Հայաստանի», մասն Ա., վեցերորդ տպագրութուն, Պոլիս, 1867, էջ 94—95: Այս երգը ձայնագրել է մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Չուհաճյանը (1837—1892), «Արշակ երկրորդ», «Կարինե» և այլ պերաների և օպերաների նկղնակը:

3. «Առ զեփյուռն Ալեմհաղի».—Առաջին անգամ տպագրվել է 1864 թվին «Մէր» տասնօրյա հանդեսում (№ 6, էջ 23), Հրանտ ստորագրությամբ Ալեմհաղի—Պուրի Յուսկուտար թաղի արվարձաններից մեկը:

4. «Ճեմէ ի քառն հսկային».—Հսկայի լեռը կամ Ուշա-Տեռեն վերին Վասփորի ասիական եզերքին մի կանաչապատ բլուր է, որ պուլտեցի հայերի համար հաճելի գրոսավայր էր: Ըստ ավանդության, այդ լեռան զառիվայրի վրա էր գտնվում Ուշա-Տեռե առասպելական հսկայի գերեզմանը:

Բանաստեղծութունը գրված է Վահանյան (հետագայում՝ վրասահունի Սրբունի Տյուսարի ծնողների) ընտանիքի հետ Հսկայի լեռը կատարած գրոսանքի առթիվ:

Մի Պեշեկիթալյանի կենսադրութունից հայտնի է, որ բանաստեղծը սիրահարված է եղել օր. Սրբունի Վահանյանին, առանց վերջինիս փոխադարձ զգացման: Ապագա վիսպասանունին հարգանքի ու երախտագիտության խոր զգացմունք տածելով իր ուսուցչի նկատմամբ, նրա մահվան (1868 թ. նոյեմբերի 29) առթիվ գրել է հետևյալ բանաստեղծութունը

Ոչ ես է նա՝ որ զիւր քընար ձօնեաց առ ազգ,
Առ հայրենիս. ոչ ես է նա՝ ոյր երգ աղու
Զարթուցանէր յուերժակաց ըզգիւցագունս
Ի բազմամեայ խորախորհուրդ նիրմանէ,
Ի տալ հառել ըզհայրենեաց փառս ի թափերս,

Էզտառապանս խորայտակ և բիւր վէրս՝
 Ոչ ևս է նա՝ ոյր նուագաւոր յագերսանաց՝
 Հարբ պատառեալ ըզդալիացեալ պատանս իւրեանց
 Մերկանային դարին թաթաւ լանջս կարեվէր
 Տայտ առնել թէ արիւն իւրեանց շըրջի ի մեզ,
 Թ՛ են նոյն մեր քաջը, նոյն մեր ստիւքը, նոյն մեր շաքը՝
 Ոչ ևս է նա՝ ոյր մեղեգիք խանդավառ
 Ի ցըրտահար վառէլն սիրտըս կայծ սիրոյ՝
 Նբզոցն ի լուր ատելութիւն, ոխ շիջանէր,
 Աչկունք հրացայտը գորովանօք ժըպտէին,
 Եւ գիրերօք փարէին սիրտք բաժանեալք,
 «Նզրայր եմք մեր» խընդաբարբառ ձայնեալ շուրջ՝
 Ոչ ևս է նա, որոյ մըմունջը ողբական
 Մողոսկէին ի ցաւահար ի հողուջ,
 Ի նըւագս ըսփոփեալ դայն հեծութեանց,
 Տըխուր էր ողբն ի մըթութեան գերթ տապան,
 Էր անուշակ իրրն ըզկոծըս պըլպուլին,
 Օրք անկանին տատեղազարդ ընդ գիշեր՝
 Ոչ ևս է, ո՛ն, լըռեաց տաւիղըն, լըռեաց Տեր...
 Մինչ լարէիք մուսայական ըզգաշնակ
 Տալ ի յորդոր փորձել մասանցս, ո՛ր քերթող,
 Քը գետէի թ՛ էր իմ բընար հընչելոց
 Չայս սրգաւոր զիմ ողջոյն ո՛ն առ ջո տապան.
 Չըլարծեցի թէ այսքան շոյա գու կանգնելոց
 Էիք շիրիմ վերայ ձըրից սըրտիդ մըտացդ՝
 Քառասուն ըզքն դարունք բարդեցին փառս,
 Չայն ամենայն ի մութ կայան թաղեցեր
 Մանսունք արդեօք թըւեցան քեզ սարդենիք
 Որ բնտրեցեր ըզհողըն ցուրտ քեզ բնակարան:
 Հանգիւր ապա, Պեշիկթաշեանըզ մեծողի
 Մինչ մըտերիմրդ ըզտապանաւըզ լացցեն,
 Հանգիւր, փանդիոն մինչ թորգոմեան զգերեզմանաւ,
 Կախիցէ զիւր սեանար լարս անմըբմունջ,
 Հանգիւր, անուն բո լիցի յօդ միութեան,
 Հանգիւր, յուշ քո կեցցէ ցորչափ ազնիւն ու լաւն,
 Տորչափ հանճարն պաշտեսցի, հանգիւր, Ողբ՝

5. «Առուճ».— Պոլսի 1870 թվի հրատարակութեան մեջ վերնագրի տակ
 գրված է «Առ նէ» ընծայականը, նէ-ն հնթողվում է Սըբուհի Չանանյանը
 (Տյուսար)՝

8. «Երգ հայրենի».— Ինչպես և Նահապետ Ռուսինյանի «Գիւլիկա»
 («Երբոր բացվին գունբն հուսո...») բանաստեղծությունը՝ գրված է «La Non-
 mandie (Quant tout renaît...») ֆրանսիական ժողովրդական երգի ներշնչմամբ:

Առաջին անգամ տպագրվել է 1850 թվին, «Բազմավեպ»-ում (№ 16
 էջ 223), ստորագրված՝ «Մհրախ Պեշիկթաշեան, յաշակերտաց Մուրատեան»

յարբ (տարանհի), այնուհետեւ, փակագծերի մեջ՝ «Quant tout renait»-ի նմանորո՞թյամբ»

Ուշագրաւ է, որ ՆՄՍՍ Պետական Զեռագրատան № 7696 տետրակում ՄԿ. Պեշկիթաշլյանի այս բանաստեղծութեան հետ կա նաեւ «La Normandie» երգի ընթացիկնակութունը: Ըստ երևույթին, ֆրանսիական ժողովրդական այս երգը ժամանակին տարածված երգերից մեկն է եղել նաև Մուրադյան վարժարանի սաների շրջանում:

9. «Էսյա Կաշորդի».— Ինչպես նաև սույն ժողովածուի №№ 10, 11 և 12 բանաստեղծութունները՝ գրված է 1802 թվի Զեյթունի ապստամբութեան շրջանում: Զեյթունըն նմանողութուն է Վիկտոր Հյուգոյի «L'enfant» («Տղան») բանաստեղծութեան (տես՝ «Les Orientales» ժողովածուի 14-րդ հրատարակութունը, էջ 22):

10. «Ման Կաշորդույն».— Այս երգի դրութեան հանգամանքների մասին Արբուէի ճրիցյանն իր հիշողութուններում (էիմ ծանոթութունը պ. Պեշկիթաշլյանի հետ, «Փորձ», 1877, № 4, էջ 186—197), պատմում է հետևյալը. «1363 թվականի վերջերս, Զեյթունի անցքերից անմիջապէս հետո, այդ երկրի նշանավոր տեր Մովսէս քահանան, որ երեսփոխանութեան պաշտոնով Պոլիս էր եկած, մեր տանը հյուր եղաւ. զորս սրտաշարժ պատմութունները յսկու համար մեզ մտ հաճախող երիտասարդների թիւը օրեցօր շատանում էր: Մոխորականից ստեղ հաճախող և Տեր Մովսիսի մոտ նստողը Պեշկիթաշլյանն էր: Մի սրտաշարժ տեսարան էր հայ մարդու համար, երբ տեր Մովսիսի արած զեյթունցոյ նկարագրութունն Պեշկիթաշլյանի խոշոր աչքերը արտասովոր կերպով և հետևաբար այդ երկու հայասեր անձանց հոգվոյս կրթերը կարգահին: 1803-ի սկզբում, ձմեռային մի ցուրտ երեկո էր, տեր Մովսիսի հետաքրքրական վեպերը գրաժամ էին չորս կողմը խմբված երիտասարդների ուշադրութունը. նա պատմում էր մի սիրտ ձմրող անցք, թե ինչպես մի հուսանաւ մայր, մի խղճուկ հայ կին, զիշերային յուսթեան մեջ, պնտերտղմի դաշտի վերա փնտրում էր իր միակ որդվոյս դիակը, որ մի օր առաջ մեծ ջարդ տված էր իր հայրենյաց թշնամյաց՝ Թորին լուսթյամբ և մորմորած սրտերով լսում էինք այդ պատմութունը. ապավորութունը շատ մեծ էր... Նույն գիշերը հյուրերից մի բանխոր Ֆապին մեր տանը բնելու, որոնց թվումն էր նաև Պեշկիթաշլյանը: Մյուս օրը, նախահաշիկի ժամանակ, Պեշկիթաշլյանը կարգաց մի կտոր թղթի վերա մատիտով գրած հետևյալ բանաստեղծութունը («Ման քաշորդույն»), որ գրած էր տեր Մովսիսի առաջի գիշերվա արած տխրագին պատմութեան ազդեցութեան տակ»:

ՄԿ. Պեշկիթաշլյանի այս բանաստեղծութեան ստեղծման հանգամանքները, մի փոքր տարբեր ձևով, պատմում է նաև Զեյթունցին («Զեյթունի անցյալն և ներկայեն», Պոլիս, 1911, էջ 95—96):

Այս երգը ձայնագրել է Մկրտիչ Պեշկիթաշլյանի աշակերտուէի Սըրբուէի Վահանյանը, հետագայում՝ փիլասոսնուէի Սըրբուէի Տյուսաբը (1842—1901): Ինչպէս Զեյթունի ապստամբութեան նկիրված մյուս բանաստեղծութունները, «Ման քաշորդույն»-ն ևս Պոլիս 1870 թ. հրատարակութեան

մեջ սպված է աղճատումներով, Հիմք ենք ընդունել Պարիզի 1904 թվի ժողովածուն:

11. «Քաղումն Կաշտրովուն».— Արտաքին նմանություններով հիշեցնում է անգլիացի բանաստեղծ Չարլս Վոլֆի (1771—1823) մի բանաստեղծությունը, սակայն իր գաղափարական բովանդակությամբ բոլորովին տարբեր է, իսկ արվեստով՝ անհամեմատ բարձր:

12. «Հայ Կաշունի».— Առաջին անգամ տպագրվել է 1863 թվին «Փարիզ» կիսամսյա լրագրում (№87), «Հայկունի» վերնագրով, անստորագիր, խմբագրության այսպիսի ծանոթությամբ.

«Հետևյալ գեղեցիկ երգը, որ մեր երիտասարդ բանաստեղծներն մինչդրամ է Չեյխունի վերջին անցից վերա, հաճությամբ կմատուցանենք մեր արդո ընթերցողաց: Իսկ արդո հեղինակին անունը չհայտնելուս պատճառն այն է միայն, թե ինքը կուզի»:

13. «Առ Հայկազուն օրիորդ».— Այս բանաստեղծության լրիվ վերնագիրն է. «Ի հանդես պարզեաբաշխության աշտկերտունչաց սրբոց Հսիփսիմյանց վարժարանին Օրթագյուղի, առ հայկազուն օրիորդս, երգ»:

14. «Չեն երչանիկ».— Չի տպագրվել բանաստեղծի կենդանության ժամանակ և ոչ էլ հետմահու ժողովածուներում: Առաջին անգամ հրատարակել է արևմտահայ գրականագետ Արամ Անտոնյանը՝ «Գիտնաբան», բարձրագույն դասընթաց, Պոլիս, 1912, էջ 312—313, որտեղից և արտասպում ենք: Ըստ ամենայնի, այս բանաստեղծությունը Պեշիկթաշլյանի սեպագրություններից է, որ վերջնականապես չի մշակված:

16 «Մար».— Այս վերնագրով տպագրվել է 1867 թվին՝ «Նոր երգարան կամ Գնար Հայաստանի», առաջին մաս, վեցերորդ տպագրություն, էջ 84: Պոլսի 1870 թ. հրատարակության մեջ համարված է թարգմանություն իտալերենից և ունի «Երգ» վերնագիրը: Հիմք ենք ընդունել լնոր երգարանի—ը:

17. «Առ Գրիգոր Էֆենսի Օսյան».— Գրված է արևմտահայ նշանավոր գրական—հասարակական գործիչ Գրիգոր Օտյանի (1834—1887) հոր մահվան առթիվ՝ Մկ. Պեշիկթաշլյանի հետ Գր. Օտյանն ունեցել է անձնական և գաղափարական մտերմություն:

18. «Ի սարժամ մահ Գաբրիելի երանյան».— Գրված է Մկրտիչ Պեշիկթաշլյանի և Տիգրան Չուհաճյանի մտերիմ ընկեր, երաժշտագետ Գաբրիել Երանյանի (1825—1862) մահվան առթիվ: Գ. Երանյանը 1862 թ. Պոստում կազմակերպված երաժշտական ընկերության նախաձեռնողներից մեկն էր: Տիգրան Չուհաճյանի հետ, 1861—1862 թ. թ. խմբագրում էր «Գնար Հայկական» վեցամսյա երաժշտական հանդեսը:

19. «Երգ» («Անույս, առխուժ կեպարան...».)—Այս բանաստեղծության մեջ հիշատակված եվիլիմեն Գ. Օտյանի բույրն է:

20. Ի մահ. Ազնիվի Լուրմյան — Գրված է էքսպրոմա՝ Մկ. Պեշիկթաշլյանի ծանոթներից մեկի վաղաժամ մահվան առթիվ: Միաժամանակ բանաստեղծը մի եղանակ է հարմարեցնում տեքստին, որով սա դառնում է ժամանակի տարածված երգերից մեկը Պոլսի հայ հասարակության մեջ:

23. «Հանելուկ».— Մկրտիչ Պեշիկթաշլյանի էպիգրամային ժանրի բանաստեղծութուններից մեկը, որ ուղղված է պապականության մուսուլմանական պրոպագանդիստ, սեպեղիոններ կաթոլիկ վարդապետ Անտոն Հասուեյանի դեմ:

24. «Գնացե՛լ, իմ սաղի».— Առաջին անգամ տպագրվել է 1864 թվին «Սէր» հանդեսում (№ 9, էջ 35), Հրանս ստորագրությամբ չիմք ենք ընդունել «Սէր»-ը: Այս բանաստեղծության սուսերեն թարգմանությունը ձայնագրել է Ստալինյան եռակի յաուրեատ, կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը:

25. «Վերադարձ».— Առաջին անգամ տպագրվել է 1864 թվին «Սէր» հանդեսում, Հրանս ստորագրությամբ չիմք ենք ընդունել Պարիզի 1904 թվի ժողովածուն:

26. «Երգ» (Վարդ մի գունեան և յոյժ վառփկիկի) — ՀՍՍՌ Պետական Ձեռագրատան № 7696 տեսրակում այս բանաստեղծության ընդօրինակությունը նույնն է, ինչ որ Պարիզի 1904 թ. ժողովածուի մեջ տպագրվածը:

27. «Երգ մօր ի վերայ մտնկան ցնջելոյ».— Առաջին անգամ տպագրվել է 1851 թվին «Բազմայէպ»-ում (№ 3, էջ 48), ստորագրված՝ «Մկրտիչ Պեշիկթաշլյան, յաշակերտաց Մուրատեան վարժարանին», այսուհետև արտատրված է Միք. Մխանաթրյանի «Բնար Հայկական»-ում (1868, էջ 116—118), առանց վերնագրի: ՀՍՍՌ Պետական Ձեռագրատան № 7696 տեսրակում այս բանաստեղծության ընդօրինակությունը զգալի կերպով տարբերվում է «Բազմայէպ»-ի, Պոլսի 1870 թվի և մյուս հրատարակություններից:

չիմք ենք ընդունել «Բազմայէպ»-ը:

28. «Ահաստով կուսիկ».— Առաջին անգամ տպագրվել է 1864 թվին «Սէր» հանդեսում, Հրանս ստորագրությամբ չիմք ենք ընդունել «Սէր»-ը: Այս բանաստեղծության սուսերեն թարգմանությունը ձայնագրել է Ստալինյան եռակի յաուրեատ, կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը:

29. «Բնար կուսիկ».— Առաջին անգամ տպագրվել է 1872 թվին «Մասիս» լրագրում (№ 1235):

31 և 32. «Յիսուս զիս, կոյս» և «Աւսի յանկարձ».— Մինաս Չեբազնի «Գրական փորձեր»-ի երկրորդ (1874) հրատարակության մեջ (էջ ԺԳ-ԺԸ) տպագրել է այս բանաստեղծությունների տարբերակները՝ ըստ Մկ. Պեշիկթաշլյանի ինքնագիր-ձեռագրերի, որ և չիմք ենք ընդունել:

36. «Մեծ ի մահ գում».— Այս բանաստեղծության վերջում ակնարկված «Բազմայէպ»-ը Գրիգոր Օսյանն է:

37. «Ի նուսասակուրիս վարդանանց».— ՀՍՍՌ Պետական Ձեռագրատան № 7696 տեսրակում այս բանաստեղծության ընդօրինակությունը նույնն է, ինչ որ Պարիզի 1904 թ. ժողովածուի մեջ տպագրվածը:

39. «Իխցագունեմ Հայոց».— Առաջին անգամ տպագրվել է 1849 թվին, «Բազմայէպ»-ում (№ 7, էջ 102—103), ունենալով նաև «Գիշեր» ենթավերնագիրը, Պոլսի 1870 թվի ժողովածուի մեջ տպագրված է այս բանաստեղծության մի տարբերակը կո՝ «Գիշեր» խորագրով, որ ինքնուրույն արժեքներ կայացնում է:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

(Ա.Ֆ.)

- Ադեն—կղզի, զբախտ
 Ազն—ազգ, ժողովուրդ:
 Ածել—ընդհանրապես՝ մի բան շարժման մեջ դնել:
 Ակակողիմ—աչքեր:
 Ակաս—մակույկ, նավակ:
 Ակնիտ, յակնիտ կալ (գործածվում է բայի հետ)—ակունջ դնել:
 Ակմբանոյլ—մխասին ժողովված, խումբ կազմած:
 Ակնկառոյց—հայացքը սեկած, ակնդետ:
 Ակումբ—հանդես, հավաքույթ, ժողով:
 Ահուհ—հախուռն:
 Ադերալիմ—նվազարանի լարերին բախելը, լարավոր նվագարան անելը:
 Ադու—քաղցր, անուշ:
 Այգուն—առաջոտան:
 Այլագունեալ—այլալիված, դունաթափված:
 Անապակ—մարտուր, ջինջ:
 Անդանօր—այնտեղ:
 Անդեայֆ—նախիր:
 Անդէն—անդ, այնտեղ:
 Անդէորդ—հովիվ:
 Անդոյլ—անդուլ, անընդմեջ:
 Անդոյր—անդորր:
 Անդրագոյն—առաջիւնդույն:
 Անդրէն—վերստին, դարձյալ, նաև՝ նույն տեղը:
 Անժոյժ—անհամբեր, անժուժկալ:
 Անկ—պատշաճ, հարմար:
 Անձկակարօս—սաստիկ կարոտած:
 Աննառ—անպատմելի:
 Անոֆիկ—անօգնական, անտերուհի:
 Անպարագիծ—անպարփակ, անսահման:
 Անսի—այնտեղից:

*) Բացատրութիւնները տալիս, նախ և առաջ նկատի ենք ունեցել, թէ տվյալ բառը բանաստեղծն ինչ առումով է գործածել:

Աւալու՞ւ—արշալույս:
Ազոսպ—շփոթ:
Ազրիէլ—ապրիլ (ամիսը):
Առսու—առավոտ:
Ասպար—վահան:
Աւաղագին—ցավալի, ողբագին:
Աւասիկ—ահաժասիկ, ահա:
Արիւնագանգ—արյունաթաթախ, արյունլի:
Արկանել—ձգել, նետեր
Արկեալ զիւրկ—վրան բաշած (բող):
Արսոնյ—արտեր:
Արսուր—արցունք:

Բ.

Բայս—բախտ, հաջողութիւն (այստեղից՝ բարեբափօրիկ):
Բարձումն—վերջնելը, վերջվելը:
Բարձրադիսակ—բարձրից դիտող:
Բեկանել—կտորել, ջարդել:
Բեկրապասար—բերկրալի, ուրախալի:

Գ.

Գաղս—գաղանի:
Գաբապար—ոտքի կըռունկ:
Գաւառ (գաւառ լուսո)—լույսի շքանք, լուսավոր վայրը:
Գեղ—գեղեցկութիւն:
Գեղանոյլ—գեղեցկութիւն:
Գեռանոյլ—ամենաուժեղ լույսի շողը. ճաճանչը:
Գոյ—ինչ որ կա, գոյութիւն ունի, գոյացութիւն. «գու ոչ գոս»—չկաս,
գոյութիւն չունես:
Գոռ (մարտ)—բուն, ահավոր:
Գորովաղէս (գուսան)—ողբանվագ:
Գուժաւոր—գուժարեք, գուժկան:
Գունակերպիկ—գունագեղ, գունգզոյն:
Գունեան—գունավոր, գունագեղ:
Գուպար—կռիվ, պայքար:
Գուպարայաղթ—հաղթող, հաղթական:
Գրգասուն—փափկասուն, քնքուշ:
Գրգաւան—վայելչութիւն վայր, դրախտ:

Դ.

Գալար—կենսալիբ:
Գանդաշել—տարուբերվել, տատանվել:
Գար—բարձրամանդակ, լեռնայանջ:
Գարձուած—պատասխան:

Պափնիդեայ—դափնի, դափնե:

Դէս—գլխոյ:

Դի—կողմ, ամեն զի—ամեն կողմ:

Կինցուցանել—ստինքից կերակրել, սնուցանել:

Դիսակ—տեսք, տեսարան:

Դոռոյք սալ—զրոհել, արշալից:

Դրասանգ—զրան վրա կախված տոնօրյա զարդարանք:

Ե.

Եղեմ—Դրախտ:

Եղուկ—վնջ:

Եռանդնազայր—մոլեգին եռանդով:

Եւեք—միայն:

Երագ—արագ:

Երախայրի—տոաջին պտուղ:

Երկնացեղիկ—երկնայինների (հրեշտակների) ցեղից:

Զ.

Զերդ, զերբ—սրպես իբրև:

Զուարթունք—հրեշտակներ:

Զօդ—հող, շաղկապ:

Ը.

Ընդելուզել—հազցնել, մխացնել, հյուսել:

Ընդէ՞ր—ինչո՞ւ:

Թ.

Թափուր—դատարկ, դուրկ, զրկված:

Թեւածել—թեւերը թափահարել:

Ժ.

Ժմիս—ժողով:

Ի.

Ի բաց—հեռու, զենք. Ի բաց վարել—հեռու նետել:

Ի նեմս—ճեմելիս, զրոսնելիս:

Ինչվան—մինչև:

Իցիւ—երանի:

Լ.

Լուլլալ—լողալ:

Լուսածղի—լուսաթիւ:

Լուսարփի—արևի լույս ունեցող, լուսաճաճանչ:

Լս.

Լսարեպասիւր—խաբուսիկ:

Լսեղ—եռանդ, աշխուժ.

Լսեմաբուր—բարուր, նաև՝ սրբան:

Լսարեկեալ—տոչորված, կիզված:

Խնժիղ—խինդ, հրճվանք:
Խոնջ—խոնջացած, հողմած:
Խրախնան—խնջույք, քեֆ:

Փ.

Մաղկասարփ—ժողովներ տարփող, սենյացող:
Մաւի—ժովագույն, կապույտ (աչքերի մասին):
Միածաւալ—ժիւածանածալալ, ժիւածանի սկս ծաղալված:
Միր—չըջագիծ, շըջան, կզր:
Մովքնկեցիկ—ժովն ընկած:
Մորձոր—փոքր, նեղ ձորակ:

Կ.

Կանառ—հանդես, խումբ, առյան:
Կայ—վիճակ, կացութիւն, նաև՝ սեղ, զիրք:
Կայրել—ցատկակել:
Կայլակի—կաթիլներ:
Կայսիո—կայառալը, ցատկոտելը:
Կապսել—պոկել, խել:
Կարեփէր—սատիկ խոցված, զարկված:
Կարկառել—երկարել, մեկնել:
Կեղեքո—ողբ, վերշտ, տրտունջ:
Կիպարի—կիպարիս:
Կողկողել—մղկտալ, մորմոքել:
Կուսան—կույտ:
Կուսիկ—դեռահաս կույտ, աղջիկ:
Կոծակից—ողբակից:
Կրճիմն—արդելիք, խոչընդոտ:

Հ.

Հանապազ—միշտ:
Հանգոյն—հման:
Հանգուկասիպ—հման:
Հայել—հայել:
Հարել—հարթածել, զարկել, հարեալ—զարկված:
Հեցալ—հեռված, կաթնած:
Հիւղ—հյուղ, խրճիթ:
Հոլարեւան—թեկը բաց, մերկ, նաև՝ թեւատարած, ստիպանած:
Հոյգ—հյոթ (ծառերի, ծաղիկներին):
Հոյլ—խումբ, բազմութիւն:
Հոպպի—խողովիք, մաղի հյուսեր:
Հորդոր—փութեանդ, աշխույժ:
Հուղկահար—ափաղակ:
Հուսկ, հուսկ յետոյ—ամենից վերջներ:
Հեափէր մարտից—մարտակոչ, ուղղակոչ:

Ճ.

Ճակատամուղ—ճակատամարտ մղող, պատերազմող:
ձեպ—շտապ, արագ:

Կ.

Կահածու—մահացու, մահաբեր:
Կաղրել—աղերսել, պաղատել:
Կայրամած—մայր երկրին կած, գեանոտարած:
Կանկազոյն—թարմ, առույգ:
Կանկուցի—մանկական:
Կասուցի—մատներ:
Կասիլ—մերձենալ, մոտենալ:
Կասուակիլ—մատուցել (ղինի, ըմպելիք):
Կարգսայեա—մարգարիաներով շարված, մարդարտահյուս:
Կեղոյս—ղուրեկան, բնքուշ, բաղբր:
Կիցակուկ—մենակ, առանձին:
Կինչի—ղեւ չեղած, լինելուց առաջ:
Կկուցի—տեղ:
Կկել—շշնջալ:
Կուար մոլորված:
Կոոսցոցի—մոտացութեան:

Յ.

Յանկուցիլ—հանդստացուցիլ:
Յանճիւր աւուրց—յուրաքանչյուր օրվա:
Յաւերժակայ—մշտենջենավոր, անանց:
Յարմնի—արթուն ժամանակ:
Յեղեղիլ—կրկնել:
Յուժամ—երբ:
Յուզարկ—ճանապարհ գցելը, ուղեկցելը:
Յուրիլ—կամաց, հանդարտ:

Ն.

Նախընձա—առաջին:
Նամէս—խոնավ, թաց:
Նայեաց—հայացք:
Նեուլագարդ—լուսավոր:
Նոնի—խավար, մութ:

Ո.

Ո—ու:
Ոգեակ—հոգյակ, հոգու չափ սիրելի:
Ոգել—ասեյ, երգել, ներբողել:
Ոլորի—հյուսեր (մաղերի):
Ոլլաւուէր—ողբի անճնատուր կղած:
Ողմաւուր—աղաչող, աղոթող:
Ոսկեակ—ոսկի (փաղարշական):

Ոսկերոյր—*ոսկեգուռն*՝
Ոսկեծղի—*ոսկեթև*։
Ուլն, ուլան—*պարանոց, վիզ*։
Ումայէս—*անպետք, անծառու*։

Չ.

Չն—*դեռ ևս չեղած*։
Չու—*տեղափոխվելը, գնալը*։

Պ.

Պաշօն հարկանել—*ծառայել, սպասավորել*։
Պասկառուկ—*ամաչկոտ, ամոթխած*։
Պար—*խումբ. պարք հաւուց—թռչունների խումբ, երամ*։
Պարայածիմ—*շուրջը պտտվել, պարել*։
Պարաւոր—*պարոզ*։
Պեւում, պեւել—*անթարթ, սպառած նայել*։

Ջ.

Ջախջախ—*ջախջախված, կտորտված, փշրտված*։
Ջամբել—*կերակրել*։
Ջայլ—*ողոր*։

Ս.

Սահարկել—*սահելով ընկնել, ներքև սահել*։
Սիրապասար—*սիրալիք*։
Սիրողարար—*սերոփ*։
Սխալի—*հրաշալի*։
Սնար—*զլխավերևը*։
Սոյլ—*սուլելը, սուլունն*։
Սուբարեալ—*սրբաբշտի*։
Սրբափայլ—*մաքրու թյամբ փայլող*։

Վ.

Վայբապար—*եզուր, ասպարդյուն*։
Վառեալ—*սպառազինված, այստեղից՝ զինավառ*։
Վառեակ—*վառեկ*։
Վառ ի վառ—*վառվառն*։
Վարսական—*բշտած, վտարված*։
Վէմ—*քար*։
Վու-վու—*աղաքսիներին ճշյունը, ձայնը*։

Տ.

Տակա—*կամաց, հետզհետե*։
Տարփելի—*տենչալի, ցանկալի*։
Տի, տի—*հասակ*։

Բ.

Բաժիշկ — երաժիշտ (ե. և սղված),

Յ.

Յանգ — միշտ:

Դ.

Դաղցունի — քաղցրիկ, անուշիկ,

Դանաշիկ — դեղձանիկ,

Դերբոդ, Բերբոդաւան — քանաստեղծ, քանաստեղծական:

Դննեւ — բղկտեւ, պատառտեւ:

Դոսմեւ — սարսափից փշա քաղվել, սոսկալ:

Թ.

Օգապարիկ — օդաթռիչ, օդում թռչող:

Օդակամբ — թռչուններ:

(քաղայեալ — իջևանած, օթևանած:

Օքարան — օթևան:

Օտարակ — քաղցր և զովացուցիչ բժշկելիք:

Մկրտիչ Պեղեկթաշլյան (առաջաբան)	5
1. Եղբայր եմք մեք	17
2. Գորուն	19
3. Առ զեփյուռն Ալեմտաղի	20
4. Ճեմք ի Լյատս Հսկային	22
5. Աշուն	26
6. Երգ («ՅԱլեմտաղն այն զեղեցիկ...»)	28
7. Երգ («Ո՞ւր էք, թե զեփյուռիկ...»)	30
8. Երգ հայրենի	1
9. Հայ քաջորդի	32
10. Մահ քաջորդույն	33
11. Թողունք քաջորդույն	35
12. Հայ քաջուհին	37
13. Առ Հայկազուն օրիորդս	40
14. Չեն երջանիկ	43
15. Մերն Վանա	43
16. Մարշ	45
17. Առ Գրիգոր էֆենաի Օտյան	46
18. Ի տարածամ մահ Գաբրիելի Երանյան...	48
19. Երգ («Անուշ, աշխույժ կերպարան...»)	49
20. Ի մահ Ազնիվի Լուծֆյան	50
21. Առ Գոհարիկ	52
22. Երգ («Անմահ, անուշ գու զինի...»)	54
23. Հանելուկ	55
24. Գնաղէք, իմ ապր	56
25. Վերագարձ	58
26. Երգ («Վարդ մի գունեան և յոյժ փափկիկ...»)	60
27. Երգ մօք ի վերայ մանկան ննջելոյ	61
28. Արտասուք կուսին	62
29. Քնար կուսին	65
30. Ներեալ ինձ, կոյս	67
31. Երգ («Յիշեան զիս, կոյս...»)	68
32. Երգ («Աւատի յանկարձ ծագէ այս լոյս...»)	69
33. Յեալին հառաչք	71

34. Քնար և շերիմ	74
35. Երգ մերձ ի մահուն եղերերգեալ	8
36. Մերձ ի մահ գրուած	80
37. Ի նահատակութիւն Վարդանանց	82
38. Քերթողական ողին Հայաստանու ի ըուն	84
39. Դիւցազունք հայոց	85
40. Գիշեր	88
41. Մանոթա չրություններ	93
42. Քառարան	98
43. Բովանդակություն	105



Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՁ 03224 Պատվեր 124, Տիրամ 3000,
 Հեղինակ. 3,75 մամ. տպագր. 6³/₄ մամ.
 Հանձնված է արտագր. 27/III 1947 թ.
 Ստորագրված է տպագրության 10/IX

Գեանջատի տպարան, Երևան, Լենինի 65.



ԳՐԱՆՆԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



220029228

489

489 4A.

